

ՍԵՐԳԻԵՑ ՈՒԶԱՆՈՎԸ

Խոնդիկի ԱՐԿԱՄԵԼՏՐԸ



891.715
Դ-62

Ա.ԶՈՎ,-ԱԵՎ.ՖՈՎ.ՑԱՆ ՅԵՐԿՐՈ.ՑԵՐ ՀՐԱ.ՏԱՐԱԿՉՈՒԹՑՈՒՆ
ՈՒՍՏՈՎ,-ԴՐՈՒ

1935

91. 71 0

- 62

30. MAY 2010

Продано
1840 г.

ԱԵՐԳԵՑ ԱՊԶԱՆՈՎ,

Հ. Յ. Ս. Վաշնե
Տ. Բ. Բ. Շ. Կուրհանզե
Ц. Խ. Բիբ-կա Տ. Բ.
պրի Կ. Գ. Ս.

ԽՈՏԻԿԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

ՅՈԹԵՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԻՑ

Թարգմ. Հ. ԲՈՂԻՄԱՆՅԱՆ

ԼՀՈՎ-ՍԵՎ-ԾՈՎ-ՅՈՒ ՅԵՐԿՐՈՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԴՈՍՏՈՎ-ԴՈՆ

1935

24.07.2013

-9971



28810-60

ԽՈՏԻԿԻ ՄԱՍԻՆ

Խոտիկը մի տղա յեւ Փոքրիկ տղա։ Նա սիրում է ամեն բան դիտել իր փոքրիկ աչքերով։ Նա ուզում է ամեն ինչ իմանալ։ Վորպես գաշտում բուսած գարնանային առաջին խոտիկը, նա նայում է ամբողջ աշխարհին, արեգակին, թուչուններին, անտառին և իր փոքրիկ գլուխը գեմ է անում քամունք։

Դեռ շատ ժամանակ է հարկավոր, վոր Խոտիկը մեծ մարդ դառնա ու նրան անվանեն Խորեն Պետրովիչ կամ մի այլ կերպ։ Իսկ մինչ այդ նրան ուղղակի Խոտիկ են ասում։ Ու շատ լավ են անում։

ԽՈՏԻԿԸ ԴԱՀՈՒԿՆԵՐՈՎ

Խոտիկն իր հայրիկի ու մայրիկի հետ ապրում է Մոսկվայում, Պետրովսկի պարկում։ Հայրիկն ամբողջ որն աշխատանքի յեւ, մայրիկը նույնպես աշխատում է։ Խոտիկն ել է աշխատում։ Մանկապարտեզում նա նորերս քանդակել է յերեք ծիննելույզ ունեցող մի հածանավ (կրեմեր) Բացի դրանից, նրանց միջին խմբակը միացյալ ուժերով յերկաթուղի շինեց։ Ափսոս միայն, վոր գնացքն ինքը չի շարժվում։ Հարկավոր է լինում թելով քաշել։ Մյուս մասերը բոլորովին խսկականի պես են։

Յերբ մանկապարտեզում վերջանում են պարապմունքները, Խոտիկը դահուկով ե սահում: Դեռ անցյալ տարբյեր, վոր նրա համար մանկական դահուկներ գնեցին: Նա արդեն սովորել ե համարձակ կերպով սարից ցած սահելթե գավազաններով և թե առանց գավազանների: Յեվբավական արագ ե սահում նա: Մինչև անդամ հայրիկից ել հետ չի մնում, մայրիկի մասին ասելն իսկ ավելորդ եւ Մանկապարտեզի բոլոր յերեխաններից առաջ ե անցնում նա:

Գլխավորն այն ե, վոր դահուկների փոկերը կարգին լինեն ու վոտքերին հարմար. նույնպես պետք ե տաք ձեռնոցներ ունենալ, թե չե ձեռքերդ կմրսեն. հետո յել գավազանների կլորակները չպետք ե վնասված լինեն: Իսկ դահուկով սահել սովորելն այնքան ել դժվար բան չե:

ԽՈՏԻԿՆ ՈՒ ՀԱՅՐԻԿԸ ՀՅՈՒՐ ԵՆ ԳՆՈՒՄ

Հանգստյան որը հայրիկը գնաց իր պաշտոնակից ընկերոջ ամառանոցը՝ դահուկով սահելու: Ընկերը ձմեռամառ ամառանոցումն եր ապրում: Այդ որը մանկապարտեզում ել պարապմունք չկար: Հայրիկն իր հետ վերցրեց նաև Խոտիկին: Նրանք նստան վարձու կառք: Դահուկները զրել եյին ծնկների արանքում: Մայրիկը դուրս յեկալ, վոր Խոտիկին լավ տեղավորի կառքում, և ասաց հայրիկին:

— Նայիր խնդրեմ, վոր մի բան չպատահի:

Հայրիկը պատասխանեց՝ «Լավ», իսկ Խոտիկը լուռ եր: Նա հո գիտեր, վոր վոչինչ չի պատահի:

Կառապանը սանձը շարժեց ու բերանով ծալծպացըք: Նա մի զառամյալ ծերուկ եր, իրեն նման ծեր եր նաև նրա փոքրիկ ձին: Նրանք գնում եյին շատ յերկար: Բայց և այնպես կայարան հասան:

ԿԱՅԱՐԱՆՈՒՄ

Կայարանում իրարանցում եր: Մարդիկ վազեվազ կայարան եյին մտնում: Մի պառավ կին ուզում եր անպատճառ ձախ գոնից մտնել, վորի վրա գրված եր «Յեւնլու դուռ»: Նրան իհարկե չեյին թողնում: Արտասահմանցի մի քաղաքացուհի նայում եր ձեռքի փոքրիկ գրքույկին և ինչվոր հարցեր եր տալիս պատահած անցորդներին: Նա գժվարությամբ եր խոսում ուսւերեն: Նրա հետեից գնում եյին յերկու բեռնակիրներ, վորոնք կրում եյին տաս և մեկ պայուսակ, վուցե և ավելի:

Խոտիկն ուզեց հայրիկին հարցնել, թե ինչն ամենքն ել այդքան շտապում են, բայց հայրիկը նայեց կայարանի ժամացույցին ու նույնպես շտապեց: Ժամացույցի փոքր մլաքը ցույց եր տալիս 12, մեծը՝ 9-ը:

Հայրիկը դահուկները պատին դեմ դրեց ու ասաց Խոտիկին.

— Այստեղ նստիր, ինձ սպասիր: Գնում եմ տուսակներ վերցնեմ:



ՀԱՅՐԻԿԸ ՏՈՄՍԱԿՆԵՐ Ե ՎԵՐՑՆՈՒՄ

Խոտիկը կանգնեց դահուկների առջև ու սկսեց ժամացուցին նայել: Մեծ սլաքը մեկ գծից մյուսը թռափ, կարծես զպանակի վրա յեր: Ապա մի ըոպե այդտեղ մնաց ու նորից թը՛ո արափ:

Խոտիկը յերբեք չեր տեսել թռչող սլաքներով ժամացուց: Նա վորոշեց այդ մասին անպատճառ հայրիկին հարցնել, իսկ հետո մանկապարտեզի յերեխաներին պատմել:

Հանկարծ ժողովուրդն ավելի շատացափ: Խոտիկը տեսնելով հայրիկի դահուկային, մորթուց կարած, կուրտկան, վազեց նրա հետեւց: Հայրիկը գնում եր մի անծանոթ մորաքրոջ հետ թևանցուկ ու ինչ-վոր բանի մասին խոսում եր: Նրանք շտապում եյին: Խոտիկն ասաց:

— Հայրիկ, հապա մեր դահուկները:

Հայրիկի թիկունքն ինչ-վոր փընթփընթաց, ապա նառ մորաքույրն ավելի ևս շտապ քայլերով պերոն* դուրս յեկան, ուր մարդիկ գնացքն են նստում: Խոտիկը բռնեց հայրիկի կուրտկայից ու վազեց հետեւց:

ԾԻԿԱՀԵՐ ՔԵՌԻՆ

Յերբ հասան մի դատարկ վագոնի առաջ, հայրիկը մի ոտար ձայնով ասաց. «Դեհ, Պետիկ, բարձրացիր»: Յեկը ընելով Խոտիկի ձեռքերից, ուզում եր աստիճանի վրա նստեցնել: Բայց այստեղ Խոտիկը տեսափ, վոր այս մարդը բոլորովին իր հայրիկը չե, այլ մի ոտար քեռի յե՛ շեկ մոռուքով ու ակնոցներով: Քեռին բավական բարկացած ասաց.

— Ո՞վ ես դու, այ տղաւ Բա ուր ե Պետիկը:

* Կայարանի այն մասը, վարի առաջ կանգնում ե գնացքը:

Հետեւում կանգնած եր մի կին, վոր դայակի յեր նման: Նա մի տղա յեր գրկել, վոր հասակով Խոտիկից մի քիչ մեծ եր: Դայակը կանչեց.

— Պետիկն այստեղ է: Յես ել տեսնելով, վոր մի տղա յեք տանում, մտածեցի, թէ մի ծանոթ տղա կինի:

Յերեխան, վորին գրկած ելին տանում, հանկարծ լաց յեղափ:

Խոտիկը ժամանակ չունեցավ խոսք ասելու, բայց, իհարկե, լաց չեղափ: Նա միայն մտածեց, վոր շատ ամոթ ե այդ հասակի յերեխային գրկած տանելը:

Այդ միջոցին հնչեց սուլիչը, շոգեքարշն սկսեց շչալ: Գնացքը շարժվեց ու գնաց: Գնացքով գնացին շիկահեք քեռին, նրա ծանոթ կինը, Պետիկն իր դայակի հետ և մյուս ուղևորները: Պերոնի վրա մնացին միայն կարմիր գլխարկով կայարանապետը և Խոտիկը:

ԽՈՏԻԿԸ ԿԵՐԱՎ

Հայրիկը տոմսերն առավ ու վերադարձավ այն տեղը, ուր թողել եր Խոտիկին: Դահուկները նստարանի տակն եյին ձգված, իսկ յերեխան չկար:

Հայրիկի գլխին ասես յեռ ջուր ածեցին: Նա նայեց նստարանի տակ, ապա կանգնեց նրա վրա, վորպեսզի ավելի լավ տեսնի, ու բարձրածայն սկսեց կանչել.

— Խոտիկ, Խոտիկ:

Ուղևորներից վոմանք շուռ յեկան նրա կողմն ու ծիծառեցին: Հայրիկին մոտեցավ գոնապանը, վոր վոսկեկար ոձիքով կապտագույն զգեստ եր հագած, և ասաց.

— Վոտներով նստարանի վրա կանգնել չի կարելի, քաղաքացի: Խնդրեմ ցած իջեք ընկուգենուց շինած նստարանից:

— Յես յերեխայիս եմ կորցրել։ Հասկանում եք, վորդում։ Փոքրիկ տղա յե, ձեռքի ափին խալ ունի, բերանն ել քիմիական մատիտով ե կեղտոտված։ Չեք տեսել արդյոք։

— Վոչ, չեմ տեսել, — պատասխանեց դռնապահը։ — Բայց ինչ ել լինի, կայարանում չի կարելի կանչել։ Նա շուռ յեկավ ու դեպի դուռը գնաց։ Հայրիկը նրա հետևից շտապեց։

Փողոցում առաջվա պես շտապ-շտապ դես ու դեն եյին վազում մարդիկ։ Յեկել եր գնացքը, և ուղևորների բազմությունը պարկերով, տոպլրակներով, պայուսակներով, մնդուկներով ու դեղնագույն փայտե տփերով դուրս եր գալիս կայարանից։ Հայրիկը հարցնում եր ուղևորներին, միջիններներին, տրամվայի կոնդուկաորներին։ Հայրիկը մոտենում եր տղաներին և նույնիսկ աղջիկներին, մտիկ եր տալիս նրանց յերեսին։ Խոտիկը չկար ու չկար։ Հայրիկը նորից կայարան դարձավ։ Այն տեղում, ուր նա թողել եր Խոտիկին, վոչ ինքը Խոտիկը կար և վոչ ել դառնուկները։

ՀԱՅՐԻԿԸ ՈՒ ՎԵՐԱՀՍԿԻԶԸ

«Չինի գնացքով մեկնած լինի նա», մտածեց հայրիկն ու պերոն վագեց։

— Զեր տոմսակը, — ասաց նրան վերահսկիչը, յերբ նա հազիվ եր հասել պերոնի ցանցակերպ գոնակին։ — Միթե չեք տեսնում մակագիրը՝ «Պատրաստեցեմ տոմսեր»։

Հայրիկը դողդոջուն ձեռքերով ներկայացրեց վերահսկիչն իր ու Խոտիկի տոմսերը։

— Զեր տոմսերն անպետք են, — ասաց վերտահսկիչը։ — Միթե չեք տեսնում տոմսի վրայի մակագիրը՝ «Պիտանի յե միայն այն գնացքի համար, վորի համար տրված ե»։

— Բայց դուք չեք աեսել արդյոք, այստեղից մի տղայեցել, — հարցրեց հայրիկը, աշխատելով հաճոյական կերպարանք տալ դեմքին։ — Մի փոքրիկ տղա յե, բերանը թանաքով կեղտուած։

— Այստեղից շատ տղաներ են անցել, — պատասխանեց վերահսկիչը, — և նետո խնդրում եմ կարդացեք այս մակագիրը՝ «Վերահսկիչին հարցեր չՏալ»։

ՀԱՅՐԻԿԸ ՀԵՌԱԳԻՐ Ե ՈՒՂԱՐԿՈՒՄ

Հայրիկը ցանցակերպ դոներից աչք ածեց ամբողջ պերոնը։ Վոչ մի տեղ Խոտիկը չեր լերնում։ «Իհարկե, գնացքով մեկնած կինի նա», — վճռեց հայրիկը։

— «Պետք ե իսկույն հեռագրել»։ Նա մոտեցավ հեռագրային բաժնի պատուհանին։ Հեռագրավարուհին տվեց նրան մի թերթ կապտագույն թուղթ։ Հայրիկը գրեց այդ թղթի վրա ինչպո՞ր հարկավոր եր, վճարեց յուրաքանչյուր խոսքի համար 15 կոպեկ ու սկսեց դիտել, թե հեռագրավարուհին ինչպես ե ուղարկում հեռագիրը։

Հեռագրավարուհին մոտեցավ փոքրիկ սեղանին, վորի վրա անիվ եր դրված։ Անվի վրա, ինչպես մի կոճի, թղթի նեղ շերտիկ եր փաթաթված։ Անվի մոտ կային մետաղե կլոր տփիկներ և պղնձե մի ձող՝ իր փայտե կոթով։ Հեռագրավարուհին բռնեց փայտե կոթն ու սկսեց չխչնկացնել չըխկ, չըխկ-չըըըխկ, չըխկ-չըխկ-չըխկ…

ՀԵՌԱԳԻՐԸ ԳՆԱՑ

Անտեսանելի ելեկտրական կայծերն արագ-արագ սկսեցին վագել այն մետաղարով, վորն ամրացված ե յերկաթուղու յերկարությամբ տնկված բարձր սյուներին։ Ավելի արագ, քան գնացքը, ավելի արագ, քան ավտոմոբիլն,

ավելի արագ, քան սավառնակը, ավելի արագ, քան քամին։ Յերկաթուղու կայարանում, ուր նստած եր ուրիշ հեռագրավարուհի և ուր դրված եր նույնպիսի հեռագրային ապարատ, կոճի վրայից սկսեց սողալ թղթե ժապավենը։ Այդ ժապավենի վրա նշված եյին կետեր և գծիկներ։ Ժապավենի վրա կետեր ու գծիկներ նշողն այն ելեկտրականությունն ե, վորն ուղարկեց Մոսկվայի հեռագրավարուհին։ այդ ելեկտրականությունը սեղմում ե փոքրիկ գրիչը, վոր և դնում ե այդ կետերն ու գծիկները։

Հեռագրավարներն ունեն իրենց այբուբենը։ Մեկ կետը և մեկ գծիկը (—) նշանակում են Ա տառը։ Մեկ գծիկը և յերեք կետը (— ...) նշանակում ե Բ տառը։ Այսպես, ուրեմն, յուրաքանչյուր տառ նշանակվում ե միայն գծիկներով և կետերով։

Հեռագիրն ընդունող հեռագրավարուհին սկսեց նայել թղթե ժապավենին ու նույնը գրեց թղթի վրա սովորական տառերով։ Դուրս յեկավ հետերալը։

Պ.ա.տ.ա.հ.ա.բ.ա.ր գ.ն.ա.ց.ք.ո.վ մ.ե.կ.ն.ե.լ և մ.ի տ.դ.ա վ.ե.ր.ա.դ.ա.ր.ե.ք ծ.ն.ո.դ.ն.ե.ր.ի.ն։

Ի՞նչ ՊԱՏԱՇԵՑ ԽՈՏԻԿԻՆ

Յերբ գնացքը մեկնեց ու Խոտիկը մենակ մնաց, նա անհանգստություն զգաց։ Հինին հայրիկն ամառանոց և գնացել ու նրան մենակ թողել այստեղ։ Բայց վնչ, այդ անկարելի յե։ Հայրիկը յերբեք այդպիսի բան չի անի։

Այդ միջնցին Խոտիկին մոտեցավ կայարանապետն ու հարցրեց։

— Այ տղա, ինչ ե, մեկին ճանապարհ գցելու յեք յեկել։ Այսպես փոքր տղա ու մնացել ե մեն-մենակ։ Ա, ինչպես ե լինում հոկտեմբերիկը, կամ նույնիսկ պիոները։

Խոտիկը հոկտեմբերիկ չեր։ Պիոների համար ել նա գեռ փոքր եր։ Բայց նա իրեն բոլորովին մեծի տեղ գրեց։ Ձեռքերը կոխեց դահուկային փոքրիկ կուրտկայի գրպաններն ու պարծենալով պատասխանեց։

— Ցես այնքան ել փոքր չեմ։ Միջին եմ։ Հայրիկս մինչև անգամ ինձ իր հետ եր վերցրել դահուկով սահելու։ Բայց նա կորավ։

Կայարանապետը զարմանքից աչքերը խոշոր բաց արեց, հոնքերը վեր քաշեց ու կռացավ դեպի փոքրիկը։ Հեռվից նա ուստական հարցական նշանի եր նման։

— Ո՞վ կորավ։

— Հայրիկս։

Զգիտեմ ինչո՞ւ կայարանապետի ծիծաղն յեկավ, բայց դա վոչ թե վիրավորական, այլ բարի ծիծաղ եր։

— Նու, մենք նրան իսկույն կգտնենք, — ասաց նա, բոնեց Խոտիկի ձեռներից ու դուրս յեկավ այն դռնակից, վորի վրա գրված եր։

ԱՆՑՔ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԽՈՏԻԿԵ ՎՃՈՒՅ ԻՆԳՆՈՒՐՈՒՅՆ ԼԻՆԵԼ

Խոտիկի շատ գուրը յեկավ, վոր այդպիսի մեծ պաշտոնի տեր մարդ նրան տանում ե ծառայողների անցքով և, ինչպես մեծի հետ, «գուքով» ե խոսում հետը։ Նա վճռեց բոլորովին ինքնուրույն լինել։ Նա նույնիսկ ուզում եր, վոր հայրիկը շուտով չգտնվի։

Նրանք կայարան յեկան։ Խոտիկն իսկույն ճանաչեց այն տեղն, ուր ժամացույցն եր կախված, ուր ինքն եր կանգնած իր դահուկների մոտ և հայրիկին եր սպասում։ Նա նույնիսկ կայարանապետին կանգնեցրեց ու ինդրեց, վոր մի բոպե սպասի, մինչև ինքը ժամացույցը նայի։

Մեծ սլաքն առաջվա նման թուշկոտում եր, Նա մոտենում եր 6 թվանշանին: Փոքր սլաքն ել կանգնել եր 12-ի և 1-ի մեջտեղը:

Նստարանի մոտ վոչ հայրը կար և վոչ դահուկները:

ՀԵՏՔԵՐԸ ԳՏՆՎՈՒՄ ԵՆ

Ամենքը ճանաչում եյին կայարանապետին ու բարեկամ եյին նրան: Նա հարցրեց վոսկեկար ոձիքով դռնապանին Խոտիկի հայրիկի մասին:

— Այս, այս: Մի քաղաքացի բոլոր ժամանակ դես ու դեն եր վազում և իր տղային փնտում: Բայց ուր կորավ, ուղիղն ասած՝ չգիտեմ: Ախը, ընկեր կայարանապետ, թե վոր ինձ առաջ ասած լինելիք, յես նրան կհարցնեյի՝ ուր ե գնալու:

Ծառայողներից մեկ ուրիշը՝ պահապանը, վոր յերկար ժամանակ ականջ եր դնում հայրիկի ու դահուկների մասին Խոտիկի պատմածներին, վերջապես խառնվեց խոսակցությանն ու ասաց.

— Յես տեսա քո հայրիկին: Նա շտապով վերցրեց դահուկներն ու վազելով նստեց գնացքը: Յես մինչև անգամ մտածեցի՝ չլինի՞ թե մի ժուլիկ ե: Նա բոլոր ժամանակ չորս կողմն եր նայում: Յերեի քեզ եր փնտում:

ՊԵՏՔ ԵՐ ԳՈՐԾԵԼ ՎՃՌԱԲԱՐ ՅԵԼ ԱՐԱԳ

Պետք եր գործել վճռաբար և արագ: Հենց դրա համար եր, վոր Խոտիկը խիստ վճռաբար դիմեց իր բարեկամին՝ կայարանապետին:

— Ընկեր կայարանապետ, տվեք ինձ ինզրեմ ձրի առամս մինչև «Պրոլետարակայա» կայարանը: Այստեղ յես

ճանապարհը կգտնեմ: Լիճը վոր անցնես, աջ կողմը, կոլտնտեսական կրպակի դեմուգեմը, № 16 ամարանոցն եւ կայարանապետը՝ նորից ժպտաց, հազար, ինչ-վոր փնթիւնթաց և վերջապես ասաց.

— Զրի տոմսակներ տալ չեմ կարող: Բացի դրանից, գնացքն այստեղ մեկնում ե միայն յերեկոյան:

— Բա ինչպես անենք, — հարցրեց Խոտիկը գլուխը հետ զցած ու շիտակ կայարանապետի աչքերին նայելով: Կայարանապետը քորեց քթի ծայրն ու ասաց:

— Դե լավ, շուտով գալու յե ծառայական շոգեքարշը: Քեզ նրա վրա կնստացնեմ, մինչև մութն ընկնի՝ կհասնեա: Շոգեքարշով գնալ չես վախենում:

— Յես նույնիսկ ավատոմորիլով ել շոֆերի կողքին նստած չեմ վախենում: Յեկ հետո, դեռ շատ ժամանակ չե, վոր յես ինքս եմ վարել ձիու սանձը: Կառապանն եր տվել ձեռքս:

ՑՈԳԵՎԱՐԸԸ

Յեկ ահա կայարանապետը ոելսերի վրայով Խոտիկին տարավ պերոնից մի փոքր հեռու: Գնալը դժվար եր, Քայլելիս՝ Խոտիկի վոտները մի անգամ խփվեցին ոելսերին ու ցավեցին: Խոտիկն ուզում եր լաց լինել, բայց շացեց, այլ միայն ցաված վոտքը շինեց:


— Ինչու ոելսերն այսքան շատ են, — հարցրեց նա:

— Վորովինետե այստեղ շատ գնացքներ են հավաքվում: Ամեն գնացք իր առանձին ուղին ունի: Տեսնում ես, ինչքան շոգեքարշ ե կանգնած:

— Տեսնում եմ: Իսկ մեր շոգեքարշը շուտով եղալու:

— Ահա: Այս:

Նրանք մոտեցան մի ահապին սև շոգեքարշի: Շոգեքարշում ինչ-վոր բան սաստիկ թշում եր: Շիկացրած պրի-



մուսի հոտ եր գալիս: Խոտիկը մի քիչ վախեցավ: Նա պինդ բռնել եր կայարանապետի ձեռքից:

— Դեհ, դեհ, մի վախիր, տղաս, — փաղաքշանքով ասաց կայարանապետը իսկ և իսկ հայրիկի նման, ու բարձր ձայնով կանչեց.

— Հեյ, ձերմակյան:

ՍԵՎ ՄԱՐԴԸ

Խոտիկն ուզում եր ասել, վոր ինքը բոլորովին ել չի վախենում, բայց այդ բոպեյին շոգեքարշի պատուհանում հանկարծ մի մարդ յերեաց, վորն արտաքուստ ամենենին նման չեր ձերմակյանի: Նրա հազին սև կուրտկա յեր, գըլխին նույլես սև, յուղապատ գլխարկ, ձեռներում մի կեղտոտ լաթ կար. Նրա յերեսն այնպես փայլուն եր ու սև, ինչպես ծինելույզ մաքրողինն ել լինում:

— Ի՞նչ կա, ընկեր կայարանապետ, — գոչեց սև ձերմակյանն՝ աշխատելովիր ձայնով խեղղել մեքենայի շաշունը:

— Այ, մի ուղևոր եմ բերել քեզ: Վերցրու նրան հետո: «Պրոլետարսկայա» կայարանում նրան ցած կրերես: Բայց տես, վոր դու յել չկորցնես սրան, ինչպես հարազատ հայրն ել կորցրել: Յերբ եք մեկնում:

— Սեմաֆորին ենք սպասում, ընկեր պետ:

— Աա, ը ըմբըմ... — մրթմրթաց կայարանապետը պատասխանի փոխարեն ու ձեռները մեկնեց Խոտիկին:

ՆԻԿՈԼԱՅ ԻՎԱՆՈՎԻՉԸ

— Դեհ, գնաս բարով, յեղբայր, — ասաց կայարանապետը: — Հա, անունդ ի՞նչ եւ:

— Խոտիկ:

— Խտանիկ։ Այդ ի՞նչ տարողինակ անուն ե։ Քեզ, յերեսի, հոկտեմբերել են։

— զգիտեմ... վնչ... այնպես, ելի՛ Իսկ քո՞ անունն
ինչպես ե:

— Ինձ կոչում են Նիկոլայ Իվանիչ, — պատասխանեց կայարանապետը:

Ապա վերցը եց նաև Խոտիկին, բարձրացը եց ձեռների վրա ու նստեցը եց շոգեքարյօն:

— ԴԵհ, Խոտիկ յեղբայր, գնաս բարով, մի՛ մոռանար։
Հայրիկիդ բարեիր։

Խոտիկը վճռեց յերբեք չմոռանալ Նիկոլայ Իվանովի-
չին և մինչև անգամ մտածեց.

«Ավստա, վոր մարդիկ հայրիկի ու մայրիկի փոխարեն յերկու հայրիկ չեն ունենում: Ի՞նչ լավ կլիներ: Մայրիկայրքիք վոչինչ թույլ չի տալիս անելու, ամեն բանից վախենում ե, այնինչ հայրիկիս հետ լինել չափազանց հետաքրքրական ու գուրեկան ե ինձ համար: Մայրիկիս փոխարեն ինձ յերկրորդ հայրիկ կլիներ Նիկոլայ Իվանիչը՝ կայարանապետը: Յերեքով միասին կապը Եին նրանք՝ հիմրիկա հայրիկը, Նիկոլայ Իվանիչը և Խոտիկը: Իսկ մայրիկը նրանց մոտ հույր կպար»:

ԵՍՏԻԿԵ ՏՈԳԵԲԱՐԵ ՎՐԱ

Շոգեքարշի հարթակը (պլոշագկան) մուլթ եր և տաք:
Ուղիղ Խոտիկի դիմացն եր ահագին սև մեքենան՝ իր կո-
թերով, անիվներով, վորոնը նման եցին ավտոմոբիլի դե-
կերին, պղնձե խողովակներով և ժամացույցի պես կլոր
տփիկներով։ Հատակը դողողում եր։ Պղնձե ծորակներն ու
խողովակները թշշում եցին։ Խոտիկը նույնիսկ չգիտեր՝ ուր

Նայի՛, Նա կանգնել եր մեքենայի առջև ու վախենում եր տեղից շարժվելու:

Հանկարծ իր հետեւում լսեց մի ամուր ձայն -

— Ապա ճանապարհից հեռու, թե չե կհասցնեմ:

Խոտիկը չեր նկատել, վոր շոգեքարշի վրա, բացի ձեր-
մակյանից, մի ուրիշ մարդ ել կար. յերեկի ձերմակյանի ոգ-
նականն ե: Նա մոտեցավ հետևի կողմից: Ձեռքերում բռնել
եր մի մեծ սև գոգավոր թի: Յերբ նա բաց արեց մեքենայի
թուջե կլոր դռնակը, Խոտիկը՝ կրակի լույսից ու տաքու-
թյունից շշմած՝ ակամա հետ թռավ հեռու անկյունը և յե-
րեսը պատին շուռ տվեց:

Անծանոթ մարդն սկսեց արագությամբ վերցնել թիով
ու ու փայլուն քարածուխը և մեքենայի կրակարանը գցել։
Կրճտոցի ու զբնդոցի ձայնից Խոտիկի ականջներն սկսե-
ցին խշխալ։ Վերջապես կլոր գուռը դղրդյունվ փակվեց,
ու Խոտիկը գուռշությամբ յերեսը հետ դարձրեց։

Անծանոթ մարդը նայում եր մեքենայի ժամացույցի
սլաքին ու մատներով թրէնկացնում եր նրանք: Ճերմակյանը
իրանը կիսով չափ դուրս եր կախել շոգեքարշի պատու-
հանից և կարծես իսպառ մոռացել եր Խոտիկին:

ՄԵՐԱԳՐԸ

Խոտիկը սիրտ արեց ու սկսեց խոսել։ Նա ձեռքով դիպակ ձերմակյանի վոտներին։

— Ընկեր Ճերմակյան, — ասաց նա, — Սեմափորան շուտով և գալու: Դուք ասագիր՝ Սեմափորային ենք սպասում:

— Դաս սեմաֆորա չե, անխելք տղա, — հապա սեմա-
ֆոր եւ ՅԵկ ալստեղ ունալիր:

Ճերմակը առնը վերցրեց Խոստիկին իր կոնսատակը և ցույց տվեց շագեքարշի զիմացի ուղին։ Յերկաթե բարձր կարմի

վրա ամըացրած եր մի մեծ տախտակ, վոր նման եր ճպուռի մեծ թեվի:

— Ահա այս ե սեմաֆորը;—ասաց ձերմակյանը:—Հիմա նա ցած ե թողած, նշանակում ե՝ գնալ չի կարելի: Առջեցից գնացք ե գնում, մենք կարող ենք նրա հետեւից հասնել: Հենց վոր բաղխվենք նրա հետեւի վագոնին — խորտակում կտուաջանա:

— Տես, տես, շարժվում ե, վեր ե բարձրանում, — գոշեց Խոտիկն ու ծափ տվեց:

Յեվ իրոք, ձիգ քաշած յերկաթալարը ճոճուց, և սեմաֆորի տախտակը, պիոների ձեռքի նման, դեպի վեր բարձրացավ:

— Դեհ, կարելի յե ուղեռվել, — ասաց ձերմակյանը:

Նա քաշեց թոկի ծայրը: Շոգեքարշն այնպես վշշաց, վոր Խոտիկի ատամներն անզամ դողդողացին: Ձերմակյանը շուռ տվեց անիմերից մեկը, հետո դեպի իրեն քաշեց կոթը, և շոգեքարշն սկսեց կայարանից դանդաղ շարժվել:

ՀԱՅՐԻԿԸ ՊԱՏԱՍԽԱՆ Ե ՍՏԱՆՈՒՄ

Այդ իսկ միջոցին հայրիկն արագ քայլերով անցնում եր հեռագրատան պատուհանի մոտից: Նա շատ հուզված եր: Հեռագրով պատասխան եր գալու «Պրոլետարսկայա» կայարանից: Բայց պատասխան չկար ու չկար: Հայրիկն ուղում եր արդեն յերկրորդ հեռագիրը տալ, բայց հանկարծ հեռագրավարուհու առջեկի ապարատն սկսեց ճրթճրթալ այնտեղից դուրս սողաց թղթե ներ ժապավենը: Հայրիկն այլևս չկարողացավ համբերել: Նա բաց արեց դուռը, վորի վրա գրված եր.

ԿՈՂՄԱԿԻ ՄԱՐԴԿԱՆՑ ՄՈՒՏՔՆ ԱՐԳԵԼՎԱԾ Ե

և վագեց դեպի ապարատը: Նա վերցրեց ժապավենը, բայց տեսավ, վոր նրա վրա միայն կետեր ու գծիկներ, գծիկներ ու կետեր են դրոշմված:

Հեռագրավարուհին գարմացած նայեց հայրիկին և բավական անքաղաքավարի կերպով ասաց:

— Քաղաքացին, կարդացի՞ք: Դեհ ուրեմն դուրս յեկեք պաշտոնական սենյակից:

— Բայց յես չեմ հասկանում... ձեր գրերը, — արտասանեց հայրիկը:— Խնդրեմ, կարդացեք ինձ համար:

— Իսկ քանի վոր չեք հասկանում, ապա ուրեմն կանգնեցեք պատուհանի հետեւ:— Այսպես ասաց հեռագրավարուհին հայրիկին: Ապա նայեց ժապավենին ու շտապ կերպով ինչ-վոր գրեց մի թերթի վրա:

— Ահա ձեր պատասխանն, — ասաց նա ու պատուհանից տվեց ծալած թերթիկը:

Հայրիկը դուրս յելավ սենյակից, աշխատելով, վոր շտապելուց մի բանի չդիպչի, ապա վերցրեց հեռագրային բլանկը. Նրա վրա գրված եր:

«Ման յեկանի ամբողջ գնացքը պատահական յերեխաներ փնտուելով վերջակետ այդպիսիներ չեն հայտարեցված վերջակետ գտնելիս կուլարկենի վերջակետ»:

ՀԵՌԱԽՈՍ

Պատասխանը շատ հասկանալի չեր: Բայց և այնպես հայրիկը հասկացավ, վոր Խոտիկը գնացքում չե:

«Գուցե տուն վերադաս լինի. ախը աչքաբաց տղայե լակոտը, — մտածեց հայրը:— Հարկավոր ե զանգահարել հեռախոսով».

Նա գլուխը ներս մտցրեց հեռագրատան պատուհանից և կամաց ու խղճալի ձախով թույլտվություն խնդրեց հե-

ռախոսով խոսելու: Հեռագրավարուհին, վոր այնքան ել բարիներից չեր, տեսնելով հայրիկի հուզված գըությունը, թույլ տվեց:

Հայրիկը նորից սենյակ մտավ, վերցրեց հեռախոսի փողն ու ականջին դրեց: Լծակը, վորի վրա կախված եր փողը, բարձրացավ, մետաղարիկները հեռախոսային ապարատում միացան, և նրանց միջով ելեկտրական հոսանքը սլացավ ուղղակի հեռախոսային կետնընական կայարանը: Այստեղ կային մեծ սե տախտակներ՝ բնիկներով: Այդքնիկներին են ամրացված Մուկվայի հեռախոսների լարերը:

Տախտակներից մեկի վրա վառվեց մի փոքրիկ լամպիկ: Տախտակի դիմաց նստած եր հեռախոսավարուհին: Նա զիմեն հագցրել եր հեռախոսի փողով մի աղեղ: Հեռախոսավարուհին տեսավ վառված լամպիկը, միացավ յերկաթուղու կայարանի հեռախոսի հետ և ասաց հայրիկին:

— Կենտրոն...

Հայրիկն ասաց.

Յ.84.62:

Դա այն բնակարանի հեռախոսի համարն եր, ուր ասդրում եր նա մայրիկի ու Խոտիկի հետ:

Հեռախոսավարուհին վերցրեց փայլուն ծայրապանակով թելը (շնուրը). յերկաթուղու կայարանի հեռախոսի հաղորդալարը վերջավորվում եր այս թելի ծայրին:

Հեռախոսավարուհու առջև դրված տախտակի վրա 60.000 բնիկ կար: Դա չափազանց շատ ե, բայց նա այնքան լավ գիտեր համարներից տեղերը, վոր իսկույն գտավ հայրիկի հեռախոսի բնիկը ու շնուրի ծայրապանակը դրեց նրա մեջ: Ապա սեղմեց կոճակը, և հայրիկի բնակարանում իսկույն հնչեց զանգակը:

20

ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Մայրիկը վերցրեց հեռախոսափողը. նրա ու հայրիկի մեջն սկսվեց հետեւյալ խոսակցությունը.

— Լսում եմ:

— Ասա, ինպրեմ, Խոտիկն արդեն ճաշել ե:

Մայրիկը չճանաչեց հայրիկի ճայնը: Կարծեց, թե խոսողն իր յեղայրը ե (Խոտիկի քեռին), և պատասխանեց.

— Խոտիկը տանը չի: Նա հայրիկի հետ ամառանոց գնաց՝ դահուկներով սահելու:

Հայրիկի ճայնը.

— Վհչ, նա ուզեց տուն վերադառնալ: Խոսողը յես եմ՝ հայրիկը:

— Բայց նա չի վերադարձել... իսկ դու ինչո՞ւ նրան մենակ ուղարկեցիր, — ասաց զննջալով չափազանց վախեցած մայրիկը և ձեռքից բաց թողեց հեռախոսափողը:

Հայրիկն ուզում եր պատմել ամբողջ ճշմարտությունը, բացատրելնրան, վոր Խոտիկը կորել ե պատահաբար, բայց մայրիկը պատասխան չեր տալիս:

Այն ժամանակ հայրիկն շտապով փողը տեղը դրեց ու վազելով դուրս յեկավ սենյակից: Հեռախոսավարուհին նայեց նրա հետեւից, կողպեց դուռը, վոր հետեւյալ մակագիրն ուներ:

ԿՈՂՄՆԱԿԻ ՄԱՐԴԿԱՆՑ ՄՈՒՏՔՆ ԱՐԳԵԼՎԱԾ Ե

ԲԵՐՆԱՏԱՐ ԱՇՏՈՍՈՐԻՆԸ

Կայարանի բակում կանգնած եր վիթխարի մեծությամբ մի բեռնատար ավտոմոբիլ: Բեռնիչները բեռնատարի վրա դարսեցին 60 պարկ ալյուր: Բեռնատարը վեր-

21

Զացավ: Բանվորները յերկաթե հեղույսներով (բոլտերով) փակում եյին բեռնատարի բացվող կողերը:

Հայրիկը վազեց բանվորների մոտ: Նա շատ հուզված եր: Հուզմունքից դժվարությամբ եր արտասանում խոսքերը:

— Յեղայրներ, ընկերներ: Արդյոք Պետրովսկիյ պարկ չեք գնում:

— Այս, Պետրովսկիյ, — պատասխանեց բանվորներից մեկն: Այսուր ենք տանում հացի գործարան:

— Ի՞նչ կլինի, վոր ինձ ել հետներդ վերցնեք, — խնդրեց հայրիկը: — Տրամվայով շատ ուշ կլինի, ինձ հետ փորձանք ե պատահել:

Եեվ ճիշտ՝ յերևում եր, վոր նրա հետ փորձանք ե պատահել:

Ավագ բանվորն ասաց:

— Ե՞ս, ի՞նչ կա վոր, կտանենք, դեռ նստիր:

Հայրիկը բարձրացավ պարկերի վրա: Շոփերը տեղից յելագ, ցած իջավ, լարեց մոտոռը, ապա նստեց զեկի մոտ: Շոփերի նստարանի կողքին յերկաթե մի յերկար ձող կար սև կոր գլխիկով: Շոփերը ծուեց այդ ձողը, վոտքով կուեց պեղալին, ու մեքենան դղրդյունով առաջ սլացավ Մոսկվայի փողոցներով:

Քսան ըովեյից հետո հայրիկն արդեն իր բնակարանի դռան գանգն եր տալիս: Վոչ-վոք չերևաց: Այն ժամանակ հայրիկն իր բանալիով բացեց դուռը և ներս մտավ: Մայրիկը տանը չեր:

Ի՞նչ է ՊԱՏԱԿԵԼ ՄԱՅՐԻԿԻՆ

Մայրիկին վոչինչ չեր պատահել: Վախից հետո միքիչ ուշքի գալով՝ նա վճռեց, վոր Խոտիկն, անտարակույս, քեռու մոտ ե գնացել: Նա ամեն անգամ, հանգստյան որը, քեռու 22

մոտ հյուր եր գնում: Այստեղ կոլիկը (Խոտիկի քեռու տղան) մի շատ հետաքրքրական բնական անկյուն ուներ:

Բայց լինչու հայրիկն հարցրեց, թե Խոտիկը տուն վերադարձել ե արդ յոք:

Հեռախոսն արդեն անջատված եր, իսկ Խոտիկի քեռու, (մորյեղբոր) բնակարանում հեռախոս չկար: Նա սպասեց, մտածելով, թե գուցե հայրիկը նորից զանգահարի: Բայց վոչ-վոք չեր զանգահարում: Այն ժամանակ մայրիկը հիշեց, վոր կարելի յե փոստ-հեռախոսագիր ուղարկել, և դուրս յեկավ փողոց:

ՓՈՍՏ-ՀԵՌԱԽՈՍԱԳԻՐ

Մոսկվայի փողոցներում շինված են մեծ, գեղեցիկ բուղկաներ: Նրանց մեջ զետեղված են Տեղեկատու բյու-բուղկաներ: Նանց հանձնարարությունների բյուրոն: Մայ-րիկը մոտեցավ մի այդպիսի բուղկայի և խնդրեց, վոր փոստ-հեռախոսագիր ուղարկեն:

— Վճարեցեք հիսուն կոպեկ, — ասաց Տեղեկատու բյուրոյի վարչուհին և տվեց մայրիկին մի բլանկ: Մայրիկը փողը վճարեց ու գրեց:

«Խոտիկն անվնա՞ս ե արդյօն: Խոկույն պատասխանեցե՞»:

Ապա գրեց հասցեն և ստորագրեց:

Վարչուհին հեռախոսով զանգահարեց իրենց գլխավոր գրասենյակը: Այնտեղ գրի անցկացրին մայրիկի նամակը և հանձնեցին նամակատարին: Նամակատարը նստեց մո-տոցիկը և թռավ Խոտիկի քեռու մոտ՝ նամակը հանձնելու:

ԽՈՏԻԿՆ ԱՆՎՆԱՍ Ե

Մայրիկը տուն վերադարձավ: Դուան մոտ նրան գիմա-վորեց հայրիկը՝ գունատ գեմքով ու զզգված մազերով: Նա վոտքից-գլուխ թաթախված եր ալյուրի մեջ:

— Այս, ինչ տնենք, ինչ անենք, — ասաց նա ու յերկու ձեռքով պինդ սեղմեց գլուխը:

Մայրիկն ուզում եր նրան նախատել, վոր նա Խոտիկին մենակ ե թողել, բայց տեսնելով, վոր հայրիկը չա-



փաղանց հուզված ե, լոեց, Նա միայն տխուր ձայնով բացականչեց.

— Գոնե հագուստող մաքրեյիր: — Յեզ հայրիկին տվեց մի խոզանակ:

Իսկ յերբ հայրիկը պատմեց նրան ամբողջ յեղելու-

թյունը, պատմեց հեռագրի մասին, գահուկների անհայտացման մասին, մայրիկը նորից սաստիկ վախեցավ՝ չլինի խոտիկին գողացած լինեն:

Հանկարծ պատուհանի տակ լսվեց թըլսթըլսկոցի ու տրաքոցի մի այսպիսի ձայն, վոր միաժամանակ կարծես տասը փշտովից եյին կրակում: Մայրիկը նայեց պատուհանից ու տեսավ փոստային մոտոցիկը: Նա՝ միքիչ ուրախացած՝ ասաց հայրիկին:

— Սա քեռու պատասխանը կլինի: Հիմա ամեն ինչ կիմանանք: — Ու գնաց գուռը բանալու:

Մի բոպեյից հայրիկն ու մայրիկը քանի քանի անգամ կարգացին փոստ-հեռախոսագիրը:

«Խոտիկն անվես սե: Վաղը չեմրուս որը Կոլիկը կրերի:»

ՏԱ ՔՄԻ

Սպասել մինչև վաղը չե մյուս որն անկարելի յե: Հայրիկն ու մայրիկն իրար նայեցին և առանց մի խոսք ասելու վորոշեցին իսկույն և յեթ գնալ քեռու մոտ:

— Գնում ենք, — հարցրեց մայրիկը:

Հայրը պատասխանեց՝ «Պավ», ու յերկուսն ել սկսեցին շտապ-շտապ կրկնակոշիկները հագնել: Մայրիկն աջ վոտքը կոխում եր ձախ կրկնակոշիկի մեջ և շատ երբ բարկանում, վոր չի կարողանում կրկնակոշիկը հագնել: Հայրիկը չեր համարձակվում նույնիսկ մի խոսք ասելու:

— [Այս բոլորի պատճառը զնւ յես, — քըրթֆիզեց մայրիկը, կռացավ և վերջապես հագավ կրկնակոշիկներն ինչպես հարկն ե:

Փողոցում շատ յերկար ժամանակ տրամվայը չեր գընում: Նրանցից վոչ հեռու կանգնած եր ցարչնագույն ներկամած մի փոքրիկ փակ ավտոմոբիլ: Հայրիկն ասաց.

— Կամենում ես, տաքսիով գնանք։ Դա ավելի շուտ կլինի և շատ թանգ ել չի նստի։

Մայրիկը զիսով համաձայնություն տվեց։ Նա սիրում եր տաքսիով ման գալ։

Նրանք մոտեցան ավտոմոբիլին, վորի վրա գրված եր «Տախոնուր»։

Շոփերին ստարանի առջև ամրացված եր հաշվիչը, վոր մի սև տփիկ ե՝ ծայրին յերկաթե յերկնագույն փոքրիկ դրոշակ ամրացրած։ Դրոշակը հետևյալ մակագիրն ուներ՝ «ազատ ե»։

Շոփերը ներքե շուռ ավեց դրոշակը։ Հայրիկն ու մայրիկը նստեցին ավտոմոբիլն ու ասացին՝ վ՞որ կողմ գնալ։ Շոփերը քեց մեքենան։ Ավտոմոբիլի անիմսերն սկսեցին պտտվել։ Նրանց հետ միաժամանակ սկսեց պտտվել նաև հաշվիչի մեջ յեղած փոքրիկ անիմ։ Այդ անիմիկը միացած եր ավտոմոբիլի անվի հետ բարակ նուրբ շղթայով։ Ավտոմոբիլը կիլոմետրներ եր կտրում, իսկ անիմիկը հաշվիչի մեջ դրոշմում եր թվանշաններ՝ ամեն մի կիլոմետրի համար 60 կոպեկ։

Յերբ հայրիկն ու մայրիկը տաքսին նստեցին, հաշվիչի վրա յերկու սպիտակ դատարկ քառակուսիներ կային, իսկ յերբ հասան քեռու տունը, հաշվիչի վրա դրոշմված եր շո. 60 կոպ.։ Հաշվիչն եր, ուրեմն, վոր ցույց տվեց, թե վորքան ե հարկավոր վճարել շոփերին։

ԳԵՐՈՒՄ ՄՈՑ

Քեռին տանն եր ու լրագիր եր կարդում։ Կոլիկն զբաղված եր իր բնական անկյունում։

Հանկարծ հնչեց գանգակը։ Կոլիկը վազեց դուռը բանալու։ Հայրիկն ու մայրիկը նախասենյակ մտան։ Մայրիկն ասաց.

— Իսկ մենք յեկել ենք Խոտիկին տանելու։ Կոլիկը պատասխանեց։

— Հիմա, — ու վազեց, մի փոքրիկ ծաղկաման բերեց։ Ծաղկամանում՝ վոզնու մազերի նման՝ ծլել եր քնքուշ կանաչ խոտիկը։

— Ինքս եմ աճեցրել — ասաց Կոլիկը պարծենալով։ Յերեխ այս խոտիկը դուք ուզում եք մեկն նվիրել նրա ծննդյան առթիվ։ Վոչինչ, վերցրեք, յես չեմ խնայում, ինձ համար նորը կաճեցնեմ։

Կոլիկն ուրախ եր, վոր մի ծառայություն ե արած լինում հորաքրոջը։ Նա ընդհանրապես բարի տղա յեր։

Այդ իսկ ըոպեյին, լրագիրը ձեռքին նախասենյակ մտավ քեռին։ Հայրիկն ու մայրիկն, առանց հանվելու, կանգնած եյին նախասենյակում։ Մայրիկն արդեն լաց եր լինում։ Իսկ հայրիկը լուռ եր։ Քեռին դժվարությամբ հասկացավ յեղելությունը։ Նա ասաց։

— Բայց ինչո՞ւ միլիցիային չեք հայտնել։ Իսկույն պետք ե հայտնել։

ՇՈԳԵՖԱՐՅԵ ԳՆՈՒՄ Ե

Շոգեքարյը, ուր տեղավորված եր Խոտիկը, այդ միջոցին մոտենում եր «Պրոլետարսկայա» կայարանին։

Ճերմակյան պատմում ե.

— Շոգեքարյ ե կոչվում հենց նրա համար, վոր քաշողը շոգին ե.

— Յես այդ գիտեմ, — ասում ե Խոտիկը։

— Մեքենայի ներսում կաթսան ե, իսկ կաթսայի առակարանը, այսինքն վառարանն, ինչպես դու յես ասում։ Կաթսայի մեջ ջուր կա։ Ջուրը յեռ ե գալիս։ Նրանից

շոգի յե գոյանում: Շոգին ուզում ե դուրս պրծնել, անց-
նում ե խողովակների միջով, հանդիպում ե մխոցներին: Հըելով՝ դուրս ե մզում նա մեկ այս կողմի մխոցը, մեկ
այն կողմինը, ինչպես վոր դուրս ե գցվում փայտե փըշ-
տովի խցանը, բայց, իհարկե, շատ ավելի ուժեղ: Մխոց-
ներն անիմսերին են միացած. նրանք են, վոր պտտում
են անիմսերը: Յեկ շոգեքարշն ել այսպիսով առաջ ե
դնում:

— Հասկանում եմ, — ասում ե Խոտիկը: — Իսկ ինչու
համար ե ժամացույցը:

— Ի՞նչ ժամացույց:

— Հենց այս, վոր մեքենայի վրա յե:

— Դա ժամացույց չի, անխելք տղա. դա մանոմետր
է: Նա ցույց ե տալիս, թե ինչքան շոգի յե հավաքվել և
արդյոք շոգին ուժեղ ե ճնշում մխոցների վրա:

— Հասկացա, — ասում ե Խոտիկը շատ վճռական կեր-
պով. նա բոլորովին չի ուզում, վոր իրեն անխելքի տեղ
դնեն:

Այն տեղերում. ուր յերկաթուղին պտույտներ ե
անում, ձերմակյանը ձիգ ե տալիս պարանը: Շոգեքարշը
շնում ե: Բայց Խոտիկի ականջն արդեն ընտելացել ե: Նա
վոչ մի բանից չի վախենում: Շոգեքարշի անիմսերի տա-
կից դուրս ե նետվում շոգին՝ պաֆֆ-պաֆ-պաֆ, պաֆֆ-
պաֆ-պաֆ: Փոքր կայարանների առաջ շոգեքարշը շնում
ե և չի կանգնում: Հեռագրի սյուները վազում են շոգե-
քարշի կողքից, ասես մեկը նրանք բարակ պարաներով ե
քաշում: Իսկ այդ բարակ պարանները հաղորդալարերն են: Սյուների հետեւում սպիտակ, ձյունածածկ դաշտերն են
պառյա գալիս. իսկ ավելի հեռուն գյուղերն են, վոր
վազում են և կարծես շոգեքարշից առաջ անցնել են
ուզում:

ՀԱՍԱԿ

Ահա «Պրոլետարսկայա» կայարանի առջև բարձրացակ՝
սեմաֆորը, վոր կարծես ուզում եր ասել՝ «համեցեք, ձեզ
համար ազատ ուղի կա»:

Ձերմակյանը գարձրեց կոթը, շուռ տվեց մեքենայի վրայի
անիվը, և շոգեքարշը դանդաղությամբ կանգ առավ, բայց
վոչ թե կայարանի դիմաց, ինչպես բոլոր գնացքներն են
անում, այլ հեռու, առանձնացած մի տեղում: Կայարանի
սպիտակ շենքին համար պետք եր շատ ոելսերի
վրայից վոտով անցնել:

Խոտիկը չեր ուզում հեռանալ շոգեքարշի վրայից. ամբո-
ջերմակյանը բոլոր ժամանակ շատ հետաքրքրական բաներ
եր պատմում: Մեքենավարի ոգնականը նույնպես լավ
մարդ եր, թեև բարկացկոտ դեմք ուներ: Ճանապարհին
սա իր ժեստե թեյամանից մի բաժակ տաք թեյ տվեց Խոտի-
կին, հետո ել մի փոքր կտոր շաքար: Խոտիկը թեյը խմեց
կծովի: Ավելի համեղ եր, քան տանը:

Մեքենավարի ոգնականն արդեն գետնի վրա յեր, յերբ
Խոտիկը պետք ե ցած իջներ շոգեքարշից: Նա յերկու ձեռ-
քով խտուց Խոտիկին ու կանգնեցրեց ոելսերի միջև:

— Շնորհակալ եմ, — ասաց Խոտիկը: — Մնաք բարնվ,
ընկեր ձերմակյան:

— Գնաս բարնվ, գնաս բարնվ, փոքրիկս: Ճանապարհը
գիտե՞ս:

— Գիտե՞ս: Մնաք բարնվ, ընկեր մեքենավարի ոգնա-
կան:

Ձերմակյանը բարձր շոգեքարշի վրա յեր: Խոտիկը պիտնե-
րական վողջույն տվեց նրան: Կողքին կանգնած եր ոգնականը:
Խոտիկը ձեռք մեկնեց նրան: Ոգնականը հանեց իր սե-
կացվե թաթաղանը, Խոտիկի ձեռքը սեղմեց ու շոյեց

նրան: Ոգնականի ձեռները յերկաթի նման կարծր եյին.
Նրանցից շոգեքարշի հոտ եր գալիս: Բայց Խոտիկին հա-
ճելի յեր այդ:

ԽՈՏԻԿԸ ՄԵՆԱԿ Ե

Խոտիկը շտապ քայլերով անցավ կայարանի սպիտակ
շենքի մոտով և բռնեց ամառանոցի ճանապարհը: Չորս
կողմն ամեն ինչ սպիտակ եր: Լայն ավագե մայթի փո-
խարեն մի նեղ արահետ եր յերեռում: Դա այն ուղին եր,
վոր անցորդներն իրենց վոտքերով եյին հարթել: Ամառա-
նոցների գոներն ու պատուհանները բոլորովին փակ եյին
և իսպառ նման չեյին ամառվա ամառանոցներին: Ամառը
պատշգամբներն սպիտակ վարագույրներով եյին ծածկված:
Ամառանոցներից շատերն ամառը բոլորովին չեյին յերեռում,
վորովհետև կանաչ ծառերով եյին շրջապատված:

Խոտիկը բավական հեռու յեր անցել կայարանից,
Քիոսկն իսպառ չեր յերեռում, նույնպես և լճակը:

Սրել մայր եր մտնում: Ցուրտն սկսում եր սաստ-
կանալ: Փշեց քամին: Խոտիկը վախեցավ, ու սիրտը լցվեց:
Նա հենվեց ծառին ու լաց յեղավ:

ԳԱՅՆԱՄՈՒՐԵ ԳԱՅԼԸ

Հանկարծ լսվեց մի բարակ ձայն.

— Ամոթ չե, մեծ տղա յես ու լաց ես լինում: Ամոթ,
ամոթ:

Խոտիկն աչքերը սրբեց ու տեսավ, վոր դիմացը մի
աղջիկ ե կանգնած, նույզես վոչ շատ փոքր, այլ միջին
հասակի: Անհայտ եր՝ վնրտեղից մոտեցավ այս աղջիկը:
Պարանի ծայրից բռնած՝ նա քաշում եր խաղալիք-սահ-
նակը, վորի մեջ նրա տիկնիկն եր նստած:



Խոտիկի լացն իսկույն կտրվեց։ Նա վեր քաշեց քի թն ու պատասխանեց։

— Իսկի՞ յել չեմ լացել... Դու ի՞նչ գիտես, կարելի յե յես գայլ եմ ասեսել։

— Այստեղ գայլեր չկան, — ասաց աղջիկը բավական բարձր ձայնով։ Ապա, միքիչ լոռովթյունից հետո, շշուկով հարցրեց։

— Մեծ գայլ եր։

— Շատ մեծ, դաշնամուրից ել մեծ, — ասաց Խոտիկն ու արդեն յերեակայեց, վոր դաշնամուրե գայլն, իր յերեք փոտքերով, կաղեկաղ գալիս ե ուղիղ իրենց վրա, բաց ե անում իր ահազին բերանը. նրա ատամներն ել ասես իսկ և իսկ դաշնամուրի ստեղներ (կլավիչներ) լինեն՝ սև ու սպիտակ։

— Բայց յես քեզ կպաշտպանեմ, — ավելացրեց Խոտիկն ու գրպանը շփշփեց. գրպանում նա վոսկրե կոթով մի փոքրիկ գրչահատ ուներ։

ԻԶՍԱՅԼՈՎՆԵՐԸ ՀՅՈՒՐԵՐԻՆ ՉՍՊԱՍԵՑԻՆ

Աղջիկը շատ հավանեց, վոր Խոտիկն այդքան անվախ եւ նա վորոշեց ավելի մոտ ծանոթանալ նրա հետ և հարցրեց։

— Իսկ ի՞նչ ես անում դու այստեղ։

— Յես հյուր եմ յեկել ծանոթներիս մոտ։

— Վհր ծանոթներիդ։

— Իզմայլովներին։

— Բայց իզմայլովները ժամը յերեքի գնացքով քաղաք մելինեցին։ Նրանք հյուրեր եյին սպասում, բայց վորովհետեւ վոչ վոք չեկավ, նրանք Մոսկվա գնացին։ Բոլորն ել գնացին, իսկ ամառանոցը կողպեցին։

— Իսկ ուր ե նրանց ամառանոցը։ Նրանց ամառանոցն այս ճանապարհի ծայրին ե, այս տեղից հեռու։

— Իսկ լճակն ուր ե։

— Էճակն ահա այստեղ ե։ Բայց նա հիմա ձյունով ե ծածկված։ Յեվ աղջիկը ցույց տվեց սպիտակ մի բացուա, վոր ձյունազգեստ սոճիներով եր պարփակված, ասես ճագարի մորթի հագած լինելին նրանք։

Խոտիկի աչքերը նորից արտասուրքով լցվեցին։ Իսկ աղջիկը՝ նրան մխիթարելու համար՝ ասաց։

— Ուզում ես, միասին կայարան գնանք։

Ա Ր Ե Վ Ի Կ Ը

— Գնանք, — ասաց Խոտիկը, — բայց մեկ նախ ծանոթանանք։ Յնունդ ի՞նչ ե։

— Իմ անունն Արուսիկ ե։ Իսկ քոնք։

Խոտիկը դեռ չեր պատասխանել, յերբ արեի պայծառ ճառագյթն ընկափ աղջկա դեմքին։ Նա խտուտ արեց նրա աչքերն ու քիթը։ Արուսիկն աչքերը կկոցեց ու փոնդտաց

— Հաափախ։

Խոտիկը ծիծաղեց ու ասաց։

— Արեիկ, տեսմնում ես ինչպես արևն ստիպում ե քեզ փոնդտալ։

Յեվ ապա ավելի բարձր ծիծաղեց։

— Ծիծաղելի յե չե, վոր քեզ Արեիկ ասացի։ նու, յես բեզ Արեիկ պիտի ասեմ. իսկ իմ անունը Խոտիկ եւ

— Սուտ ես ասում, այդպես անուն չկա։

— Չե, կա։ Իմ անունը Խոտիկ ե, վորովհետեւ յես աիրում եմ արեին։ Քեզ ել նույնպես կսիրեմ։ չե վոր դու Արեիկ ես։

Աղջիկն ուզում եր բարկանալ, բայց հետո ինքն ել ծիծաղեց:

- Խոտիկ:
- Արեմիկ:

ԽՈՏԻԿԸ ՀՅՈՒՐ ԳՆԱՅ

Յերեխաներն իրար ձեռքից բռնած կայարան գնացին: Սահնակում նստած տիկնիկին Խոտիկն եր տանում: Ամբողջ ճանապարհը յերեխաները գրուց եյին անում, կարծես անվերջ ծլվլացող ծիտեր լինեցին:

— Դու վոր գնացքով յեկար:

— Յես գնացքով չեմ յեկել, այլ շոգեքարշով: Ի՞նչ սարսափելի բան եր: Բայց յես բոլորովին չեյի վախենում: Յես մի ծանոթ մեքենավար ունեմ, ազգանունը ձերմակյան ե. հետո ծանոթ եմ նույն-

պես կայարանապետի հետ: Խոտիկն այս բոլորը պատմում եր պարծենալով. Բայց Արեմիկը հանկարծ ընդհատեց նրան.

— Իմ հայրիկս ել կայարանապետ ե: Յես միշտ այս տեղ եմ ապրում և գիտեմ բոլոր գնացքները:

Նրանք հասան կայարան: Դուրս յեկավ Արեվիկի հայրիկը: Յերեխաները պատմեցին նրան, թե ինչպես հանդիպեցին իրար. պատմեցին նաև Խոտիկի արկածների մասին: Արեմիկի հայրիկը նայեց Խոտիկին ու ասաց.

— Ուրեմն հենց դժւ յես այս կորած յերեխան: Իսկ ծնողներդ վհրքան են անհանգստացել: Հիմա ի՞նչպես անենք, վոր քեզ տուն ճամբենք: Գնացքը Մոսկվա յե մեկնում յերեկոյան ժամը 7-ին միայն: Դեհ լավ, ժամը 9-ին տանը կլինես: Իսկ մինչ այդ, մեզ մոտ կմնաս:

Նա տարավ Խոտիկին իր տունը: Նրանց բնակարանը կայարանի կողքին եր: Արեմիկի մայրիկը Խոտիկին ճաշ տվեց ուտելու: Ճաշից հետո յերեխաները խաղացին «փայտիկ-ազատիկ» և «մետրոպոլիտեն» խաղերը: Նրանք վերցրին չորս աթոռ, նրանց վրա մեծ շալեր փոեցին և իրենք մտնում եյին աթոռների տակ, ինչպես վագոնները — գետնի տակ:

ՀԱՅՐԻԿՆ ՈՒ ՄԱՅՐԻԿԸ

Խոտիկի հայրիկն ու մայրիկը չգիտեյին, վոր նա վողջ առողջ ե և ուրան ժամանակ և անցկացնում: Մայրիկը նստած եր տանը դունատ, արտասուրն աչքերին: Նա լուռ եր:

Հայրիկը հեռախոսով զանգահարեց միլիցիա: Միլիցիայից պատասխանեցին, վոր նա կորած յերեխայի մասին պետք ե դիմում տար դեռ կայարանում, բայց ինչ ել լինի՝ նրանք կփնտռեն:

Հայրիկը հեռախոսով հարցրեց բոլոր ծանոթներին: Արդեն բոլոր ծանոթները պիտեյին, վոր Խոտիկը կորել ե: Ծնողների հետ միասին անհանգստանում եյին նաև բոլոր ծանոթները:

Մանկապարտեղի ղեկավարուհին՝ մորաքույր Մանեշանա
միքանի անգամ յեկավ ու Խոտիկի մասին հարցը եց։
Խոտիկը զետինն եր անցել։

Վերջապես հայրիկն ասաց։

— Ցես կգնամ լրագրի խմբագրությունը։ Պետք ե հայ-
տարարություն տալ։ Լրագրի ամենքն են կարգում։ Գուցե-
մեկը տեսած լինի մեր տղային և վորևե տեղեկություն
տա մեզ։

Մայրիկը տիմուր ձայնով պատասխանեց։

— Հավ, գնա, յես կնսաւեմ այստեղ, հեռախոսի մոտ։

ԽՍԲԱԳԻՐԸ

Արդեն յերեկո յեր։ Բայց հայրիկը գիտեր, վոր լրագիրը
գիշերն ե տպվում։ Առավոտյան վաղ լրագիրն ուղարկում
են բոլոր քաղաքները։ Մոսկվայի փողոցներում սկսում են
ծախել առավոտվանից։

Հայրիկը ծանոթ եր խմբագրի հետ։ Նա պատմեց խմբա-
գրին իր դարտի մասին։ Բայց խմբագրը գլուխը թափա-
հարեց ու հառաչելով ասաց։

— Խոտիկի մասին չեմ կարող տպել։ Ամենեին չեմ կա-
րող։ Դուք գիտեք, վոր այսոր հանգստի որ ե, ամենքը
հանգստանում են։ տպարանում աշխատում են միայն քա-
ռասուն հոգի։ Վաղվա մեր թերթը շատ փոքր ծավալով ե
լույս աեսնելու։

— Դեռ մի կերպ, Միխայիլ Ցեֆիմովիչ, դուք հո հաս-
կանում եք, այդպիսի դժբախտություն... — ասաց հայրիկը,
և նրա աչքերը փայլատակեցին, կարծես փոքր յերեխա լի-
ներ նա։

Այդ իսկ միջոցին ներս մտավ լրագրի աշխատակիցը։
Նրա ձեռքում լրագրի մի մեծ թերթ կալ, միայն մի կող-

մից տպված։ Նա թերթը դրեց սեղանին։ Խմբագիրը վերց-
ընց կարմիր մատիտն ու սկսեց թերթի վրա նշաններ դնե
և ասաց աշխատակցին։

— Այս մեկը խոշոր տառերով շարել (և տակից յեր-
կար կարմիր գիծ քաշեց), այս մեկն իսպառ դուրս գցե
(և միքանի տողի վրայից մեծ կարմիր խաչ քաշեց, և
խաչի ծայրից ել մի վոլորուն գծիկ անցկացրեց)։

Ապա գլուխը բարձրացրեց և առաց հայրիկին։

— Նու, ձեր բախտից եւ Փոքրիկ տեղ բացվեց։ Տվեք
ձեր հայտարարությունը։

Հայրիկը նստեց սեղանի մոտ և խկույն գրեց, թե կո-
րել ե Խոտիկ անունով մի տղա։ ով տեսնի այդ յերեխա-
յին, թող անպատճառ հաղորդի հայրիկին հեռախոսով՝ կամ
ծառայության տեղում կամ տանը։


Խմբագիրն աչքի անցկացրեց հայրիկի գրածը, մի ինչ-
վոր չնշեց, մի ինչ-վոր ել ուղղեց և ասաց։

— Գնացեք տպարան և ասեք, վոր յես խնդրում եմ
խկույն շարել այս տողերը և մտցնել վաղվա համարում։

ԼՐԱԳԻՐԸ ՇԱՐՈՒՄ ԵՆ

Տպարանում միքիչ մութ եր, ներկի և խեղդուկ ծխի
հոտ եր գալիս։ Առաջին սենյակում մեքենաներն ելին
շարված։ Նրանցից յուրաքանչյուրը յերկու՝ իրար վրա դըր-
ված սեղանի մեծություն ուներ։ Այս մեքենաները լինո-
ւիպ են կոչվում։ Յուրաքանչյուր մեքենայի առջև մի-մի
լինութիպիստ եր նստած։

Հայրիկն մուսեցավ լինութիպիստին ու հանձնեց թղթի
կտորը։ Լինութիպիստը թերթն առջել դրեց ու սկսեց իր
մեքենայի ստեղները (մատները) սեղմել։ Հենց վոր սեղ-
մում ե ստեղը, մեքենայում, ուր վոր հարկավոր ե, ներ-



քեզ ե ընկնում մի նեղ պղնձե շերտիկ, վորի ծայրին ամրացված ե տառակաղապարիկը: Լինոտիպիստը սեղմում եր ստեղները: Մեքենան ճըթճըթացնում եր, ասես բազմաթիվ ծղրիդներ լինելին: Հարկավոր տառակաղապարիկները շարվում եյին կողք-կողքի: Յերբ դրանցից կազմվեց մի ամբողջ տող, մեքենայում հնչեց զանգի մի խուլ ձայն: Լինոտիպիստը կոթը դարձրեց: Տառակաղապարիկները լրցվեցին հալած արճիճով: Արճիճը լցվեց կաղապարիկի մեջ ու պնդացավ: Լինոտիպիստը կոթը մյուս կողմ դարձրեց, և մի ծանր ու փայլուն արծաթագույն շերտիկ ընկափուղիղ սեղանի վրա: Այդ շերտիկի մի ծայրում տեղափորված եյին հայրիկի հայտարարության առաջին տողերը: Հայրիկը ձեռքը մեկնեց և կամեցավ վերցնել այդ շերտիկը բայց քիչ մասց՝ բղավեր: Յեռացող ինքնայեռի չափ տաք եր այն:

Լինոտիպ կոչվող մեքենայի վրա, տաք հալեցրած արճից բառեր ու տողեր են կազմվում: Յերբ մեկ տողը պատրաստ լինի, պետք ե անպատճառ սպասել, վոր նա սառչի: Թե չե իրոք կարելի յե այրվել:

Հայրիկի տաս տողանի հայտարարությունը հինգ բոպեյում պատրաստ եր: Հայրիկը ձեռնոցները հագավ, վերցրեց տողերն ու տարավ հենց այն աշխատակցին, վորը խմբագրին եր բերել լրագրի թերթը:

ԾԱՐՎԱՌՔԸ ՅԵՐԵՍՆԵՐԻ ԲԱԺԱՆԵԼԸ

Աշխատակցի առջե, յերկաթե մեծ սեղանի վրա շարված եյին բազմաթիվ տողեր՝ տառերը դեպի վեր: Այդ բոլոր տողերը միասին կազմում եյին արծաթագույն մի տախտակ՝ ամբողջ լրագրի մեծությամբ: Տողերից բաղկացած այդ տախտակի վրա հայրիկը տեսավ լրագրի անունը,

հետո մի նկար և շատ ու շատ փոքրիկ տառեր: Կարդալը դժվար եր, վորովհետեւ տառերը գլխիվայր եյին. այդպիս լինում ե այն ժամանակ, յերբ լրագրը բռնես հայելու առջև ու հայելու մեջ ցանկանաս կարգալ: Աշխատակցը վերցրեց հայրիկի տողերը և տեղափորեց նրանք արդեն սարքված լրագրային տախտակի ազատ տեղերում:

Տողերից սարքված լրագրային տախտակը ամրակազմ յերկաթե շրջանակի մեջ եր պարփակված: Աշխատակցն ավելի պինդ վոլորեց շրջանակի անկյունի պտուտակները, վորպեսզի տողերը չքրքրվեն ու չթափվեն, և բարձր ձայնով ասաց.

— Շարվածքը յերեսների բաժանելը պատրաստ եւ վերցրեք շարվածքը մեքենայի վրա: (Աշխատակցն այս տեղ ամենագլխավորն եր):

Յերկու բանվոր մոտեցան, դժվարությամբ բարձրացրին շրջանակի մեջ պարփակված շարվածքը և տարան ոպագրիչ մեքենայի մոտ:

ԳԻԾԵՐՎԱԾ ԺԱՄԸ 12 Ե

Արդեն գիշերվա մոտ ժամի 12 եր: Հայրիկը մտածեց՝ «Գուցե Խոտիկն արդեն տուն յեկած լինի, իսկ յես այս տեղ զբաղված մարդկանց գործից հետ եմ պահում»:

Նա գնաց գրասենյակ և այստեղից զանգահարեց տուն: Մայրիկը վախեցած ու կամաց ձայնով հարցրեց.

— Ո՞վ ե խոսում:

Մայրիկը վախենում եր, վոր Խոտիկը տրամվայի կամ գնացքի տակ կարող եր ընկած լինել: Ամեն անգամ, հեռախոսի գանգը հնչելիս, նրա սիրտը տրոփել եր սկսում: Նրան այնպես եր թվում, վոր հեռախոսը մի սարսափելի լուր պիտի գուժի Խոտիկի մասին:

Հայրիկը մայրիկի ձայնից հասկացավ, վոր Խոտիկը տուն չի յեկել։ Հայրիկն աշխատեց խոսել վորքան կարելի յե ուրախ յեղանակով, վոր նրան հանգստացնի։

— Խոսողը յես եմ՝ հայրիկը։ Տպարանից եմ խոսում։ Անձամբ եմ հետևում հայտարարության տպագրությանը։ Վաղը, հավանորեն, ամեն բան կիմանանք։

Գիշերվա ժամի 12 եր, այնինչ Խոտիկը տանը չեր։ Նրա ուր լինելը հայտնի չեր։

ԼՐԱԳԻՐԸ ՏՊՎՈՒՄ Ե

Լրագրի շարվածքն իր շրջանակով գետեղեցին մեքենայի վրա։ Մեքենան մի գլանիկ ուներ, վորի վրա սև ներկ եր քսված։ Գլանիկը գրտնակեց լրագրի շարվածքը, և բոլոր արծաթագույն տառերը սեացան։ Այնուհետև տախտակն՝ իր վրա դրված շարվածքի հետ միասին՝ շարժվեց ու մտավ թմբկազլանի տակ։ Թմբկազլանի վրա յել մի մեծ թերթ թուղթ եր դրված։ Թմբկազլանը պտտվեց, թերթը սեղմեց շարվածքին, և բոլոր տառերը, նկարները, թվանշաններն ու գծիկները տպագրվեցին թերթի վրա սև ներկով։

Այս ձևով կազմվեց լրագրի յերեսը։ Հայրիկը մոտեցավ մեքենային և լրագրի յերեսի մի անկյունում իր հայտարարությունը տեսավ։ Այնտեղ խոշոր տառերով տպված եր.

ԿՈՐԵԼ Ե ՄԻ ՏՂԱ

և ապա հիշված եր տպայի անունը և այն հեռախոսի համարը, վորով պետք եր հաղորդել, յեթե մեկը յերեխային տեսներ,

Հայրիկը թույլտվություն խնդրեց վերցնել լրագրի մի որինակը։ Նրան թույլ տվին։ Լրագրի մուրը դեռ չու

բացել ու կեղտոտում եր։ Հայրիկը խնամքով ծալեց լրագիրն ու գրպանը դրեց՝ մայրիկին ցույց տալու համար։ Այնուհետև հայրիկը Պետրովսկիյ պարկ ուղևորվեց։

ԽՈՏԻԿԸ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Ե ՏՈՒՆ ԳՆԱԼՈՒ

Ժամը վեց և կեսին «Պրոլետարսկայա» կայարանից Խոտիկի հետեւից յեկան։ Նա չեր ուզում գնալու նա մեծ ուրախությամբ խաղ եր անում Արկիկի հետ։ Բայց չեն վոր հայրիկն ու մայրիկը Մոսկվայում անհամբեր նրան եյին սպասում և անհանգիստ լինում։

Խոտիկն ամենքին «մնաք բարով» ասաց, ձեռքերը սեղմեց և՝ իբրև հրաժեշտի խոսք՝ ասաց՝ իր ընկերունուն։

— Արկիկ, յեկ դու մեր մանկապարտեզը։ Մենք ունենք դահուկներ և սահնակներ։ Մենք սարի վրայից կսահնենք։ Յես քեզ ցույց կտամ յերեք ծինելույզ ունեցող հածանակը և մեր ընդհանուրիս յերկաթուղին։

Արկիկի մալրիկը նայում եր Խոտիկին ու ժպտում։

Ապա Խոտիկը հազնվեց ու կայարան գնաց։ Արկիկն ուզում եր նրան ճանապարհ գցել, բայց մայրը չթողեց, ուշ եր։

ԳՆԱՑՔԸ ՄՈՏԵՆՈՒՄ Ե

Արդեն մութն ընկել եր։ Խոտիկն ու Արկիկի հայրիկը կանգնել եյին պլատֆորմի վրա։ Մի ահագին սի գնացք եր մոտենում կայարանին։ Նրա առջեկց յերեք լապտեր եր վառվում։ Նրանք այնպես եյին լուսավորում խավարի մեջ, կարծես մի-մի պայծառ լուսամուտներ լինելին։

Ուղևորներն սկսեցին գեսուղեն ընկնել ու վազվացել։ Դեղնագույն մուշտակը հագին մի կոլտնտեսական, ձեռքերում յերկու ծանր կողով բռնած, դեպի գնացքը վազեց։

Կայարանից շտապելով դուրս յեկավ մի քաղաքացի. Նա մեկ ձեռքով մի ահագին կապոց եր բռնել, իսկ մյուս ձեռքով չորս տարեկանի չափ մի տղա յեր դրկել: Կապոցը ցած դրեց պլատֆորմի վրա, յերեխային կանգնեցրեց կողեին ու դարձյալ կայարան մտավ:

Նորից շտապ կերպով դուրս վազեց նա. այս անգամ մի ձեռքով տաճում եր առաջինից ել ավելի մեծ կապոց, իսկ մյուս կոնատակին՝ յերկու տարեկանի մոտ մի ուրիշ յերեխա: Քաղաքացին յերեխային կանգնեցրեց մյուսի կողքին, կապոցը գետին դրեց ու նորից վազեց կայարան. վերջապես նա դուրս յեկավ՝ ձեռքին յերկու կապոց ու մի կողով: Նրա հետեւ գնում եր մի կին՝ ծծկեր մանկիկը և բաղմաթիկ մանր փաթեթներ գրկում:

«Սա յերեվի յերեխաների մայրիկն ե», մտածեց Խոտիկը: Սոսկալի աղմուկով և դղրդյունով եր մոտենում գնացըը: Խոտիկը ձեռքերով ծածկեց ականջները: Նա չեր վախենում, բայց միայն գնացքը չափազանց աղմկում եր ու շատ եր մեծ: Գնացքը կանգ առավ: Շոգեքարշն սկսեց թշշալ ու շնչել, կարծես նրան շատ դժվար եր իր հետեւ քար տալ այդքան վագններ ու շատ հոգնել եր:

ԱՎԱԳ ԿՈՆԴՈՒԿՏՈՐԸ

Կայարանապետին շտապ քայլերով մոտեցավ ալեոր և խիստ դեմքով մի մարդ՝ հուշատետը ձեռին և արծաթե շղթայիկով սուլիչը վզից կախ:

Դա տվագ կոնդուկտորն եր, ամբողջ գնացքի ամենագլխավորը:

— Ամեն ինչ կարգին ե, — ասաց կոնդուկտորը: — Կարելի յե մեկնել:

— Մեկնեցեք, Սեմյոնիչ, — պատասխանեց կայարանա-

պետը: Ի դեպ, վերցրեք հետոներդ այս փոքրիկին: Ճանապարհին կորցը ել ե ծնողներին:

— Բայց ուր տանեմ յերեխային, Յերեկի հարկ կլինի միլիցիային հանձնել:

— Խոչումիլիցիային, Նախելքը գլխին տղա յե: Տրամվայ վոր նստեցնեք, նա ինքը կգտնի իրենց տունը:

— Իհարկե կգտնեմ:

ԴԵՊԻ ՏՈՒՆ

Խոտիկին տեղավորեցին վագոնի առանձնացած փոքրիկ խցում: Այդ սենյակը միայն կոնդուկտորների համար եր: Վոչ-վոք Խոտիկից տոմսակ չպահանջեց. ամբողջ ճանապարհը վոչ-վոք նրա հետ չխոսեց:

Մուկվայի կայարանում նրան շտապով անցկացրին այն անցքից, վորտեղից յելումուտ անելու իրավունք ունեյին միայն ծառայողները: Խոտիկն ուզում եր հարցնել, թե ուր ե արդյոք իր ծանոթ Նիկոլայ Իվանովիչը, բայց վախեցավ: Խոտիկին տանող կոնդուկտորը շատ բարկացկոտ մարդ եր յերեւմ: Խոտիկին կայարանի շենքից դուրս տարան ու կանգնեցրին ժամացույցի տակ: Մնաս բարով ասելիս միայն կոնդուկտորը հարցրեց:

— Փող ունես:

— Ուսեմ, — պատասխանեց Խոտիկը:

— Դեմ ուրեմն, նստիր տրամվայ ու տուն գնա:

ՏՐԱՄՎԱՅԸ ՊԱՐԿ Ե ԳՆՈՒՄ

Կայարանի մոտից անցնում եր № 6 տրամվայը, վոր բուրովին դատարկ եր: Խոտիկը վազելով ցած իջավ կայարանի սանդուխքներից, վազեց տրամվայի հետեւ ու հարանի նրան այն տեղում, ուր կանգ ե առնում տրամվայը:

Խոտիկի հետ միասին շատ մարդիկ եյին նստում տրամվայ: Նրանք շտապում եյին ու իրար բոթում:

Տրամվայի կոնդուկտորը կանգնած եր հարթակին (ոլոպածկա) ու բարձրաձայն գոչում եր.

— Տրամվայը պարկ ե գնում: Տրամվայը պարկ ե գնում:
«Հենց ինձ ել պարկն ե հարկավոր», մտածեց Խոտիկը,
բռնեց բռնատեղն ու վագոն մտավ:

Վագոնում ազատ տեղ շատ կար: Խոտիկը բռնեց անկյունի տեղը, հարմար կերպով նստեց ու քննեց: Յերազում նա տեսնում եր Արեվիկին, շիկահեր քեռուն, նիկոյայի վանովիչին, մեքենավար Ճերմակյանին, մանկապարտեզի յերեխաներին և իր մայրիկին: Մայրիկը կարծես մեքենայով կար եր անում: Մեքենան աղմկում եր՝ ուկ-ուկ-ուկ-ուկ....

Խոտիկի տեղը տաք եր ու հարմար: Յերբեմն միայն վուներին եր փչում: Այդ ժամանակ նա մայրիկին ասում եր:

— Մայրիկ, ոդանցքը փակես,
Մայրիկը փակում եր ոդանցքն, ու նորից տաքանում եր:

ՏՐԱՄՎԱՅԻ ՊԱՐԿԸ

Բանից դուրս յեկավ, վոր վագոնը վոչ թե Պետրովսկիյ պարկ ե գնում, ուր ապրում եր Խոտիկը, այլ տրամվայի պարկը, ուր վոր գիշերները տրամվայի վագոններն են հավաքում:

Դեռ միայն յերեկո յեր, իսկ այս վագոնը, մյուսներից առաջ, թողել եր աշխատանքը:

Հենց վոր վագոնը պարկ մտավ, կոնդուկտորը շտապեց գրասենյակ՝ տոմսերի փողը հանձնելու: Այն մարդը, վոր վարում ե տրամվայի մոտորը և քշում ե վագոնը, այսինքն վագոնավարը, վերցրեց մոտորի բանալիները և առանց

44

պատուհանից ներս նայելու՝ գնաց: Սրանք յերկուսն ել ուզում եյին շուտ ազատվեն:

Իսկ Խոտիկը, վագոնի նստարանի վրա կռւչ յեկած, խոր քնի մեջ եր: Նա դրսից նույնիսկ չեր ել յերեսում:

ՀԱՎԱՄՎԱՐԱՐՈՒԴԻ ՄԱՐՅԱ ՊԵՏՐՈՎՆԱՆ

Գիշերը տրամվայի վագոններն սկսեցին հավաքվել պարկը:

Յեկավ բանվորների գիշերային հերթափոխությունը՝ Հավաքարարուհի Մարյա Պետրովնան վագոններն եր ավելում և լաթով լուսամուտների ապակիները սրբում: Ամենից առաջ նա տեսավ քնած Խոտիկին

— Այս ել քեզ նոր բան. վագոնում տղա յե քնած: Ո՞վ ե սրան այստեղ թողել: Վեր կաց, այ տղա, վեր կաց:

Խոտիկը շուռ յեկավ ու քնաթաթախ վնթվնթաց.

— Մայրիկ, ել յերբեք վոչ մի տեղ չեմ գնա. միայնող, վոր քնեմ:

Մարյա Պետրովնան բռնեց նրա կոներից և ուժեղ կերպով սկսեց թափ տալ:


Խոտիկն աչքերը բաց արեց, տեսավ անծանոթ մի կին, վախեցավ ու բարձր ձայնով գոչեց.

— Մայրիկ, մայրիկ:

— Ի՞նչ պատահեց քեզ, այ տղա: Մի վախիր, — փառաքշանքով ասաց Մարյա Պետրովնան: — Մայրիկիդ հետ եյիր գնում: Այդ ինչպես պատահեց, վոր նա քեզ մոռացավ:

— Վհչ, յես մենակ եյի գնում, — պատասխանեց Խոտիկն: Այդ ըոպեյին նա իրեն շատ խեղճ զգաց: Նա հիշեց, վոր ինքը կորել ե դեռ առավոտյան, մտածեց, վոր այլևս յերբեք չի տեսնելու իր հայրիկին ու մայրիկին, և դառնապես լաց յեղավ.

45



— Ուզում եմ տուն գնալ, մայրիկիս մոտ:

Մարյա Պետրովնան մտատանջության մեջ ընկավ. ի՞նչ անի այս յերեխային գիշերվա ուշ ժամանակին: Խոտիկը շարունակում եր ավելի ու ավելի լաց լինել:

Այն ժամանակ Մարյա Պետրովնան ասաց.

— Ես ել իմ քոռ բախտից. զե՞ն, լաց մի լինիր: Առավոտյան կդանենք մայրիկիդ: Ի՞նչպես ենրա անունը, գիտե՞՞ս:

— Գիտեմ:

— Այ, առավոտը կվերկենաս, Տեղեկատու բյուրոյում կիմանամ ձեր հասցեն ու ինքս կտանեմ քեզ մայրիկիդ մոտ: Իսկ հիմա գնանք, բալիկս, հանգստացիր:

Ցեղ Խոտիկին տարավ տրամվայի պարկի միջով:

ՎՈՐՏԵՂ ԵՆ ԳԻՇԵՐՈՒՄ ՏՐԱՄՎԱՅՆԵՐԸ

Խոտիկի քունը խիստ տանում եր, բայց հենց վոր վագոնից դուրս յեկավ, քունը բոլորովին փախավ:

Նա յերբեք չեր տեսել այդքան շատ տրամվայի վագոններ մի տեղ հավաքված: Վագոնները կանգնած եյին ապակեծածկ կտուրի տակ՝ յերկար շարքերով: Առաստանց կախված եյին ահազին լապտերներ: Նրանք այնքան լույս եյին վառվում, վոր նրանց նայելիս մարդու աչքերն եյին ցավում: Առաստաղի վրա իրար եյին հյուսված ելեկտրալարերը՝ սարդի վոստայնի նման: Տրամվայի ոելսերի մեջտեղում, գետնի մեջ, խոր խրամներ եյին փորված:

Այդ խրամներից մեկում մի բանվոր եր կանգնած:

Բանվորը կանչեց

— Տներ:

Տրամվայի վագոնը շարժվեց ու կանդ առավ բանվորի վեհագերնում: Խոտիկը կուցավ, վորպեսզի վագոնի տակից նայի, թե ի՞նչ ե լինելու: Բանվորը կանգնած եր վա-

գոնի տակ: Մեկ ձեռքում ելեկտրական լամպան եր, մյուս ձեռքում դարձուցակը:

— Ի՞նչ ե անում նա այնտեղ, — հարցրեց Խոտիկը:

— Մոտուն ե ստուգում, — պատասխանեց Մարյա Պետրովնա: Դե շուտ արա, գնանք, յես պետք ե աշխատեմ:

ՊԱՀԱՊԱՆԸ

Նա Խոտիկին տարավ պահապանի տնակը:

Այնտեղ չափազանց շոգ եր: Պահապանն, անկյունում նստած, ծխում եր:

— Այ, մի վորդեգիր եմ բերել քեզ, — ասաց Մարյա Պետրովնա: Թող գիշերս այստեղ քնի:

— Վորտեղից ես գտել դրան: Զինի՞ մեկը տրամվայում ե մոռացել: Հարկավոր ե միլիցիա զանգահարել:

— Ի՞նչ հարկավոր ե գիշերով յերեխային միլիցիայի դոները քարշ տալ, թող մինչև առավոտ քնի, հետո կտեսնենք: Առավոտվա շառը իրիկվա խերից լավ ե:

— Ե, ի՞նչ կա վոր, — ասաց պահապանը, — թող քնի: Մենք նրան կպառկեցնենք այ այստեղ, վառարանի կողքին:

ՊԱՀԱՊԱՆՆ ԵԼ ԼԱՎ ՄԱՐԴ Ե

Պահապանը գետնին փոեց իր ահազին սև քուրքը: Մարյա Պետրովնան հանեց Խոտիկի վալենկաները և լուրտկան:

Խոտիկը պառկեց քուրքի վրա, գլուխը դրեց բարձին, վոր կազմված եր կուրտկայից ու վալենկաներից: Մարյա Պետրովնան, վերմակի տեղ, Խոտիկի վրա իր մեծ տաք շալը ծածկեց և ասաց:

«Դե քնի» ու գնաց:

Խոտիկը պահապանի հետ մենակ մնաց ու սկսեց մտածել:

«Շոգեքարշը գնում ե, վորովհետեւ այնտեղ շոգի կախում ինչից ե առաջ գնում տրամվայը»:

Նա բաց արեց աչքերը: Պահապանը նայում եր նրան ու ծիծաղում:

Ի՞նչ ես այդտեղ մրժմրժում, — հարցրեց պահապանը Խոտիկին:

— Յես մտածում եմ այն մասին, թե ինչից ե վոր տրամվայը գնում ե:

Ի՞ՆՉԻՑ Ե ՎՈՐ ՏՐԱՄՎԱՅԸ ԳՆՈՒՄ Ե

Տրամվային առաջ տանողն ելեկտրականությոն ե ելեկտրական կայարանից լարերով անցնում ե ելեկտրական հոսանքը: Տրամվայի վագոնի վրա ելեկտրական աղեղ ե ամրացված: Այդ աղեղով ե անցնում ելեկտրական հոսանքը և մտնում մոտոռը: Նու, Տոտոնն ել պտտում ե անիմսերը: Վագոնավարը նստած ե առջևի հարթակում և դարձնում ե կոթը: Մոտոռի մեջ բաց ե թողնում մերթ շատ, մերթ քիչ հոսանք: Յեթե կոթն ավելի դարձնի, տրամվայն ել ավելի արագ առաջ կգնա: Հենց վոր կոթը հետ դարձնի, հոսանքը չի հասնի մոտոռին, և վագոնը կանգ ե առնում:

— Ուրեմն այդպես ե... — ասաց Խոտիկը: — Բա սահմանարական ավտոմոբիլն ինչպես ե առաջ գնում:

— Յերկի այնպես, ինչպես բոլոր ավտոմոբիլներն են առաջ գնում: Ավտոմոբիլները, հո գիտես, առաջ են գնում...

Բայց Խոտիկը չլսեց ինչպես են առաջ գնում ավտոմոբիլները: Պահապանի տնակում դրած եր մի յերկաթե վառարան: Վառարանը չափազանց տաքացնում եր, Տակը փոփած քուրքն ել վափուկ եր:

Խոտիկի աչքերը վակվեցին: Խոտիկը քնեց:

ԱՐԱՎՈՏԸ

Մարյա Պետրովնան առավոտ կանուխ արթնացրեց Խոտիկին.

Նա չեր ուզում տեղից յենել: Բայց յերբ բոլորովին արթնեց, նորից հիշեց հայրիկին ու մայրիկին. Միթե իրեն չեն փնտռում:

Նա ասաց Մարյա Պետրովնային.

— Մորաքույր, տարեք ինձ շուտով մայրիկիս մնա՞ — Զե, հոգի ջան, — ասաց մորաքույրը, — առաջ պետք եթե խմենք, հետո. Տեղեկատու բյուրոն ել դեռ բաց չի: Պահապանը վերցրեց վառարանի վրայից թեյամանը. պապաստեց բաժակները, շաքարը և բարանկիները: Մարյա Պետրովնան, պահապանը և Խոտիկը միասին թեյ խմեցին:

ՓՈՂՈՑՈՒՄ

Տրամվայի պարկը դրսից բավական նման եր յեռհարկանի սովորական տան: Նա շինված եր կարմիր աղյուսից և ավելի մեծ եր քան յեռհարկանի տունը, իսկ պատուհան բոլորովին չուներ: Պատուհանների փոխանակ ապակյալ տուրով եր ծածկված պարկ:

Պարկի շենքի գլխին մի մեծ ժամացույց կար: Ժամացույցի փոքր սլաքը ցույց եր տայիս 9-ը, իսկ մեծը՝ 12:

Պարկից գուրս եյին գալիս տրամվայի վերջին վագոնները, վորոնք զանազան կողմեր եյին գնում:

Տրամվայի կանգառներում լիքը ժողովուրդ եր: Տրամվայի վագոնները լեփ-լեցուն եյին: Ամենքը շտապում եյին աշխատանքի: Ծառայողները բաց եյին անում խանութիների յերկաթե կափարիչները: Դռնապաններն ավագ եյին ցանում մայթելին:

ԱՌՋԵՎԻ ՀԱՐԹԱԿՈՒՄ

Մարյա Պետրովնան, Խոտիկին հետը վերցրեց ու բարձրացավ տրամվայի վագոնի առջեկի հարթակը:

Վագոնավարը շատ խիստ կերպով ասաց:

Յերեխայի հետ Վագոն մտեք, այստեղ չի թույլատրվում կանգնել:

Մարյա Պետրովնան վագոնավարին ներկայացրեց վայլուն փոքրիկ համարանիշ (նոմերոկ) և ասաց:

— Յուրային եմ: Յերեխան ել ինձ հետ ե:

Ու դրանից հետո այլևս չխոսեցին: Յերևի խոսելուքան ել չունեյին: Բացի դրանից, վագոնի գնալու ժամանակ վագոնավարը խոսելու իրավունք չունի:

Մարյա Պետրովնան Խոտիկի հետ գնում եր նրա մայքիկի հասցեն իմանալու: Նա վախենում եր մենակ թողնել Խոտիկին: Կարծում եր, վոր յերեխան իրենց տան հասցեն չգիտե: Յեթե իմանար, չեր մոլորպի:

Նրանք կանգնած եյին առջեկի հարթակում:

ԱՐԳԵԼԱԿԸ

Խոտիկը սկսեց դիտել ինչպես ե աշխատում վագոնավարը:

Վագոնավարը ձախ ձեռքով դարձնում եր փայտեկոր գլխիկով մեծ կոթը:

Խոտիկը հիշեց ինչ վոր պատմել եր նրան պահապանը տրամվայի պարկում, և մտածեց:

«Տես, ինչպես սաստիկ ե դղբդացնում մոտոռը, յերբ նրա մեջ անցնում ե ելեկտրական հոսանքը»:

Խոտիկը հանկարծ ինչ վոր թշոց լսեց:
Թ22222222...

Սկզբում նա վախեցավ: Կարծեց, թե ելեկտրական մոռուն ե փչացել: Բայց Մարյա Պետրովնան կանգնել եր իր տեղում, կարծես վոչինչ չեր պատահել: Վագոնավարը հանգիստ կերպով նայում եր իր առաջ և միայն վոտքով ուժգնորեն դանդն եր հուպ տալիս: Զանգակի գլուխը դուրս եր ցցված հատակում: Նա՝ նման եր մեծ, հաստ մեխի գլխի:

Հնչում եր տրամվայի զանգակի բարձր զնդոցը:
Դյաննն-դյաննն-դյաննն-դյաննն...

Բացի զնդոցից, նաև
Թ222222222...

Մարդիկ վագեվագ անցնում եյին տրամվայի ռել-սերի վրայով: Ու յերբ ուղին ազատ եր, վագոնավարը նորից եր դարձնում կոթը: Տրամվայը դադարում եր զանգահարելուց ու թշշալուց և ավելի արագ եր առաջ գնում:

«Ի՞նչն ե արդյոք այդպես թշշացողը», մտածեց Խոտիկը:

Հարցնելու մարդ չկար: Մարիա Պետրովնան շատ բարկացած եր յերեսում, իսկ վագոնավարի հետ խոսել, յերբ վագոնը շարժման մեջ ե, արգելված ե: Այդ մասին նույնիսկ գրված ե առջեկ հարթակում:

Վագոնը մոտենում ե մի մեծ հրապարակի: Վագոնավարը դարձրեց կոթը: Վագոնը դանդաղեցրեց իր ընթացքը, նորից թշշաց ու կանգնեց: Այստեղ Խոտիկը նկատեց, վոր թշշում եր այն ժամանակ, յերբ վագոնավարն աջ ձեռքով դարձնում եր կոթը: Այդ կոթի տակ հետեւյալ մակագրությունը կար:

ՎԵՍՏԻՆՉԱՌԻՋԻ ԱՐԳԵԼԱԿԻ

Մարյա Պետրովնան բոնեց Խոտիկի ուսից և ասաց:
— Դեհ, գնանք. պետք ե ցած գալ: Այ, այստեղ մի գուղկա յե յերեսում: Տեղեկատու բյուլոն եւ:

Յերբ նրանք վագոնի աստիճաններով ցած իջան, Խոտիկն ասաց:

— Իսկ յես գիտեմ, ինչի՞ համար ե արգելակը: Արգելակը վագոնը կագնեցնելու համար եւ Շոգեբարշի վրա յել արգելակ կա:

— Ամեն բան ել ուզում ե իմանալ, ամեն բան ել նրան հարկավոր ե, — մըթմըթաց Մարյա Պետրովնա: — Քեզ ծեծ ե հարկավոր, այ ինչ:

Խոտիկը նայեց Մարյա Պետրովնային: Նա շատ բարկացած եր: Ամբողջ զիշերն աշխատելուց նա շատ հոգնել եր:

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԲՅՈՒՐՈՆ

Սա այն տեղեկատու բուղկան չեր, վորտեղից մայրիկը Փաստային հեռախոսագիր եր ուղարկել: Սա ուրիշ եր:

Մարյա Պետրովնան Խոտիկի հետ մոտեցավ բուղկայի ազակեծածկ պատուհանին: Պատուհանը փակ եր, Վարիչը Մագիկը եր կարդում:

Մարյա Պետրովնան չգիտեր ինչ անի: Խոտիկը նույնպես չգիտեր ինչ անել: Նա սկսեց կարդալ հայտարարությունը.

**Ա.ՑՍՏԵՂ ԿԱՐԵԼԻ ՅԵ ԻՄԱՆԱԼ ՄՈՍԿՎԱՅԻ
ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԲՆԱԿՉԻ ՀԱՍՑԵՆ**

Անցավ մի քիչ ժամանակ: Վարիչը նկատեց Մարյա Պետրովնային, ցած դրեց լրագիրը, բաց արեց պատուհանն ու հարցրեց:

— Ի՞նչ եք կամենում, քաղաքացուհի։
 Մարյա Պետրովնան պատասխանեց։
 — Այս փոքրիկն կորցրել ե իր ծնողներին, Ուզում
 եյի նրանց հասցեն իմանալ։
 Վարիչը գլուխը պատուհանից դուրս հանեց և տեսավ
 Խոտիկին։
 — Վ՞որ փոքրիկը։ Ա՞յս։
 — Հենց այս։ Տրամվայում գտա նրան, Ուզում եմ
 նրանց հասցեն։ Ինքս ել կտանեյի տուն ու կհանձնեյի հայ-
 րիկն ու մայրիկին։
 — Սպասիր, սպասիր, — ասաց վարիչը և վերցրեց
 լրագրի անկյունում հայտարարություն եր տպա-
 գրված։

ԿՈՐԵԼ Ե ՄԻ ՏՂԱ

— Այդ տղայի անունն ի՞նչ ե։
 Խոտիկը լսեց այս խոսակցությունը և ասաց։
 — Քանի գեռ փոքր եմ, անունս Խոտիկ ե։ Յերբ մե-
 ծանամ, իմ անունը կլինի...
 Բայց վարիչն ընդհատեց նրան, բարձր ձայնով ծիծա-
 ղեց ու գոչեց։
 — Դեռ իհարկե սա յե՝ Խոտիկն ե։ Ծնողներն արդեն
 յերկրորդ որն ե նրան են մաս գալիս։ Այ, լրագրում հայ-
 տարարություն ել կա։ Այս լոպեյին կզանգահարենք։

ՀԱՅՐԻԿԸ ԴԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՂՈՒՄ

Հայրիկը շատ տխուր նստել եր իր ծառայության տե-
 ղում, նա ու մայրիկն ամբողջ գիշերը չեյին քնել։ Բոլոր

ժամանակ վորեկ լուր եյին սպասում։ Առավոտյան հայրիկը
 պաշտոնի գնաց, իսկ մայրիկը մնաց տանը՝ բոլորովին
 հիվանդ։

Հայրիկի ծառայած հիմնարկում արդեն ամենքը գիտե-
 յին, վոր Խոտիկը կորել ե։ Ամենքը խղճում եյին հայրի-
 կն և մտածում եյին, թե արդյոք ուր կարող ե կորած
 լինել յերեխան։

Մի քանիսն ասում եյին, թե յերեխան կդանվի, մի
 քանիսն ել՝ թե հավանորեն գնացքի անիցների տակ ե
 մնացել կամ մի ուրիշ դժբախտություն ե յեկել
 դվին։

Հանկարծ հնչեց հեռախոսի զանգը։
 — Ձեր յերեխան դանվել ե։ Անմիջապես գնացեք
 Պուշկինյան հրապարակը։ Նա կանգնած է Տեղեկատու
 բյուրոյի մոտ, գորշագույն շալով ծածկված մի կնոջ
 կողքին։

— Խնդրեմ պահեցեք նրանց, — աղաղակեց հայրիկը
 հեռախոսով։ — Զլինի թե բաց թողնեք նրան, Աչքերդ նրա-
 նից չհեռացնեք։ Պինդ պահեցեք նրան։

Հայրիկի հետ մի սենյակում նստող ծառայողներն
 իրենց գլուխը շուռ տվին գետի հայրիկը և ուշագրությամբ
 սկսեցին ականջ գնել նրա խոսակցությանը։ Հենց վոր
 հայրիկը հեռախոսափողը ցած դրեց, բոլորը տեղներից վեր
 թռան, մոտեցան հայրիկին և ամհնքը միաժամանակ
 սկսեցին խոսել։

— Ի՞նչ ե պատահել, Բանել են։ Բանել են։ Ճիշտ ե,
 վոր գտնվել ե։ Յես հո ասում եյի։

Հարեւան սենյակից վազեց, յեկավ մի կին, վոր նույն-
 պես այնտեղ եր ծառայում, և սկսեց ճիճվալ։

— Միթե յերկու վոտն ել կտրել ե, Ախր յես ասում եմ։

Հայրիկը վեր կացավ և վճռաբ ասաց։

— Մինչև սեփական աչքերովս չտեսնեմ, վոչինչ չեմ ասի: — Հետո շտապով գուրս յեկավ նախասենյակը, վերցրեց վերարկում և գլխարկն ու վագելով ցած իջավ սանդուխք-ներից:

Հայրիկի ծառայած հիմնարկից մինչև Պուշկինյան հրապարակը յերթանեկում եր № 1 ավտոբուսը:

Հայրիկն արագությամբ նատեց ավտոբուսը: Վերարկուի միայն մեկ թես եր կարողացել հագնել: Գլխին ոտարի գդակ եր դրել: Կրկնակոշիկներ նույնպես չեր հագել: Այ, ինչպես եր շտապում նա:

ԲԵՆԶԻՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ

Հայրիկը միայն ավտոբուսում կարողացավ մի փոքր շունչ քաշել: Նա նատեց շոփերի մոտ:

Ավտոբուսն արագ եր ընթանում: Հայրիկի սիրտը բարխում եր: Նա ուզում եր փորքան կարելի յե շուտով տեսնել Խոտիկին:

Հայրիկը հանկարծ նկատեց, վոր ավտոբուսն ընթանում ե վոյ թե դեպի Պուշկինյան հրապարակն, այլ մի ուրիշ կողմ: Հայրիկն անմիջապես դարձավ կոնդուկտորին.

— Ասեք, խնդրեմ, ուր ենք գնում մենք:

Բենզին վերցնելու: — պատասխանեց կոնդուկտորը:

— Ինչպես թե բենզին վերցնելու, ինչ բենզին: Տոմ-սերը տալիս եք մինչև Պուշկինյան հրապարակը, իսկ ինքներդ գնում եք բենզին վերցնելու:

— Մի հուզվեք, քաղաքացի: Վհրտեղի տոմսակ վերցրել եք, այնտեղ ել կհասնեք. իսկ առանց բենզինի վոչ մի անդ ել չեք հասնի: Բենզինը վոր վերջանա, մոտոռն այլես չի աշխատի:

Այդ միջոցին ավտոբուսը ծովեց դեպի մի փոքրիկ հրապարակ:

Այստեղ շինված եր ապակյա փոքր մի բուդկա, իսկ բուդկայի կողքին կար մի սյունակ՝ բարձր թափանցիկ բաժակներով և մեծ կլոր ցիֆերբլատով (թվացույց): Սյունակի գլխին մի սպիտակ փայլատ գունդ եր յերկում «բենզին» մակագրությամբ:

Ընդհանուր առմամբ սյունակը նման եր մի ահագին ջերմաչափի, վոր հիվանդի կոնատակին են դնում:

Ի՞ՆՉՆ Ե ԱՌԱՋ ՔՅՈՒՄ ԱՎՏՈՄՈՒԹԻԼԻՆ

Բուդկայի մոտ հերթ եյին կանգնել բեռնատար ավտոմոբիլներ, տաքսիներ և հասարակ ավտոներ: Մինչև անգամ մի ավտոմոբիլ ել կար, վոր հատկապես փողոցներ ջրելու, համար եւ ինչու դա ձմեռ ժամանակ այստեղ եր գտնվում, անհայտ եւ:

Բայց ավտոբուսը բենզինի սյունակին մոտեցավ առանց հերթի: Շոփերը դուրս յեկավ իր բուդկայից և մոտեցավ յերկաթե բաքին, վոր զետեղված եր ավտոբուսի հետեւյալ կաթե բաքին, վոր զերանը մի մեծ պղնձե խցանով եր խցված: Վում: Բաքի բերանը մի մեծ պղնձե խցանով եր խցված: Շոփերը հետ պտտեց խցանը, մոտեցավ բենզինի սյունակին ու ծառայողից վերցրեց պղնձե ծայրապանակով ուեկին ու ծառայողից վերցրեց պղնձե ծայրապանակով: Մառայողը կոթը պտուտակեցին խողովակի ծայրապանակը: Մառայողը կոթը դարձրեց. ապակյա բաժակներն իսկույն սկսեցին բենզիդարձրեց. ապակյա բաժակներն իսկույն սկսեցին միջով հոսել ուղնով լցվել: Բենզինն սկսեց խողովակի միջով հոսել ուղղակի ավտոբուսի բաքը: Ցիֆերպլատի ոլաքը ցույց եր պալիս ինչքան բենզին ե լցվում ավտոբուսի մեջ:

Ցերը ոլաքը ցույց տվեց 30 լիտր, շոփերն ասաց:

— Բավական եւ:

Հետո նա սկսեց մեքենայի դեղնագույն թանձր յուղ ածել մոտորի մեջ, ապա ստուգեց մոտորը՝ մեկ լարելով, մեկ դադարեցնելով:

Հայրիկը քանի անգամ մոտեցավ շոփերին և խնդրեց վրբան կարելի յե շուտով ճանապարհվել:

— Վոչինչ, չեք ուշանա, — ասում եր շոփերը: — Որեկան միայն մեկ անգամ ենք կանգ առնում. վեց ժամվա աշխատանքի համար մի անգամից ենք բենզին և յուե վերցնում: Վոչինչ, չեք ուշանա: Համենայն դեպս տրամվայից շուտ կհասնեք:

Վերջապես շոփերը տեղավորվեց իր բուդկայում, հընչեցրեց շշակը: Ուղևորները նստեցին իրենց տեղը, և ավտորուսն շարժվեց:

ՄԻԹԵ ԽՈՏԻԿԸ ՆՈՐԻՑ ԿՈՐԱՎ

Տեղեկատու բյուրոյի բուդկան յերեսում եր հեռվից՝ նրա առաջ ժողովուրդ եր խոնված, ահագին հերթ կար:

Հայրիկը վագեց դեպի բուդկան և մարդկանց այս ու այն կողմ հրելով սկսեց փնտուել Խոտիկին: Բայց Խոտիկը չկար:

Այն ժամանակ հայրիկը ներողություն ինդրեց ու բարձրաձայն ասաց.

— Քաղաքացիներ, արդյոք չեք տեսել գորշագույն շալով մի կին, հետո ել մի տղա: Անունը Խոտիկ:

Հերթում կանգնած մի քաղաքացի ամենքի փոխարեն պատասխանեց.

— Վո՞չ, չենք տեսել,

Հայրիկի սիրաը մի անգամից ճմլվեց: Նա մտածեց՝ «Միթե Խոտիկը նորից կորավ»:

ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

— Թույլ տվեք, թույլ տվեք, — ասաց հանկարծ կաշվե տուժուրկան հագին ու պորտֆելը ձեռին մի մարդ: — Նրանք կարծեմ ավտոմատ հեռախոսի բուդկայումն են: Հենց այս ըոպեյին յես նրանց համար զանգահարեցի 3.84.62 համարը: Նույնիսկ սեփական տաս կոպեկանոցս ձգեցի ավտոմատի անցքը:

Ավտոմատ-հեռախոսը գտնվում եր հենց այդտեղ, Տեղեկատու բյուրոյին առընթեր:

Հայրիկը առաջ անցավ բուդկայի հետևից և ապակեծածկ դռներից տեսավ իր Խոտիկին: Խոտիկը հեռախոսում եր:

Հենց վոր տեսավ հայրիկին, հեռախոսափողը տվեց Մարյա Պետրովնային և դուրս վագեց բուդկայից:

Հայրիկը գրկեց Խոտիկին, իսկ Խոտիկը հայրիկի պարանոցին ընկապվ:

Նրանք սկզբում վոչինչ չելին խոսում, շատ ուրախ ելին, վոր յերկուվ են:

Մարյա Պետրովնան կանգնած եր նրանց կողին ու գորշագույն շալով աչքերն եր ուրբում:

— Հայրիկ ջան, ախր ուր ելիր այսքան ժամանակ: Յես բուես բեզ սպասեցի, սպասեցի... բայց դու չեկար: Յես բուրովին փետացա: Յեկ հետո յես հեռախոսով խօսեցի մայրիկիս հետ: Մայրիկս առողջ ե, միայն առանց ինձ միքիչ ձանձրացել ե:

ՏԱՆՑ

Հայրիկը հրաժեշտի վողջույն տվեց Մարյա Պետրովնային, շնորհակալություն հաւատնեց նրան, ասաց, վոր իբրև

Հյուր իրենց տունն անցնի: Խոտիկն ել իր կարգին հրաժեշտի վողջույն տվեց: Այնուհետև հայրիկի հետ տրամվայ նստեցին և ուղևորվեցին տուն՝ Պետրովսկիյ պարկ:
Ճանապարհին Խոտիկը պատմում եր իր արկածները,
հայրիկն ել իրը: Խոտիկը հարցնում եր.

- Արկիկին կհրավիրենք մեր տուն:
- Անպատճառ կհրավիրենք, — պատասխանեց հայրիկը:
- Իսկ Արեմիկի հայրիկին ու մայրիկին:
- Կհրավիրենք, կհրավիրենք:

Յերբ նրանք տուն հասան, մայրիկն սկսեց լաց լինել,
իսկ հայրիկը շուտ-շուտ թաշկինակն եր զերցնում և
աչքերն ու քիթն եր սրբում:

Այն ժամանակ Խոտիկը հարցրեց.

- Ախր ինչու յեք լաց լինում: Շատ ծիծաղելի յեք:
- Մենք վախենում եյինք, վոր դու բոլորովին կորել
ես, — պատասխանեց հայրիկը:
- Նու, ասաց Խոտիկը, — յես ինչպես կարող եմ կոր-
չել: Յես արդեն շատ փոքր չեմ: Յես միջին եմ:

Մայրիկն ու հայրիկն իհարկե ժամացին, իսկ Խոտիկը
սկսեց հանկարծ դես ու դեն ընկնել և ասաց.

— Ինչի՞ յեմ այստեղ նստել: Ախր յես առանց այն ել
ու շացա պարապմունքներին: Դուք ել իսկույն ձեր աշխա-

տանքին գնացեք: Յերեկոյան կտեսնվենք ու կխոսենք:
Այս ասելով Խոտիկը հավաքեց իր իրերը և մանկա-

պարտեղ զազեց:

Այս պատմության մեջ ամեն ինչ ճիշտ ե:

Ամբողջ յերկրում առաջ են շարժվում շոգեքարշեր և
գնացքներ, ելեկտրալարերով անցնում ե ելեկտրական հո-
սանքը, իսկ քաղաքներում տպագրվում են լրագրեր, աղմբ-
կում են տրամվայները, ավտոբուսները, ավտոմոբիլները:

Ճշմարիտ ե և այն, վոր ամենուրեք մարդիկ են աշխա-
տում և վոր աշխարհիս վրա, մի ինչ-վոր վայրում, Արեմիկ
անունով մի փոքրիկ աղջիկ ե ապրում. յես սիրում եմ
նրան և նրան ել նվիրում եմ իմ այս պատմվածքը:

ԱՅԱ ՅԵՎ ԱՄԲՈՂՋ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ահա և ամբողջ պատմությունը, թե ինչպես բոլորովին
պիտի կորչեր Խոտիկը: Խոտիկը հիմա . յել ապրում ե իր
հայրիկի ու մայրիկի հետ Պետրովսկիյ պարկում:

ՄԱՆԿԱՀԱՍԱԿ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Отв. ред. Г. А. Потенц

Пом. тех. ред. Д. М. Джинибалаян

Отв. ред. Г. А. Потенц Пом. тех. ред. д. Г. д.
Издание 290|4550. Об'ем 4 печ. листа. Статформат А5-148|210. Уполн.-
крайлит 00-11420. Тираж 2000 экз. Заказ 3010. Сдано в набор 11|VI-1935 г.
Подписано в печать 3|VII-1935 г.

Подписано в печать 3/VII-1935 г.
1935 года г. Ростов

Подписано в печать 3 VI 1955 г.
Типография им. Стакчи 1902 года г. Ростов на Дону.



49-
8139

ԳԻՐԸ 80 ԿՊԹ.
Цена 80 կոմ.



094207-6

На армянском языке

СЕРГЕЙ РОЗАНОВ

ПРИКЛЮЧЕНИЯ ТРАВКИ

Издание седьмое

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ
КРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО
Ростов н-Д., Буденновский пр., № 30

ԳՐԱԴԱՐԱՆ
Առաջարկված Մասնավոր և Համապատասխան հայության համար
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ԿԵՐՊՈՅՑԵՆՏՐՈ)